ՍԻՕՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ, ԲԱՆԱՍՏԵՂԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԿՈՐԴ ՏԱՐԻ

ՀԱՏՈՐ ՄԻԱՄԱՆՑԻ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

1868

Աղաճանեան Միքայէլ և Կարապետ աղայք ։
Ալեմեան Խաչատուր աղա Վանցի ։
Անոճ աղա Խանիկցի ։
Աշճանեան Գօրգոս աղա ։
Առաջ Եփեճեան ։
Արտչեան մահտեսի Սարգիս աղա ։
Արիտճեան Միքայէլ աղա ։
Արզանեան Մուրատ պէկ ։
Բաղդասարեան Յակոբ աղա ։
Բաբաեղեան Սուրէն աղա ։
Գաբրիէլ աղա (մահտեսի) ։
Գաբրիէլեան մահտեսի Միքայէլ աղա ոսկերիչ ։
Գալուստեան մահտեսի Խաչատուր աղա ։
Գողդադեան Ճանիկ աղա Ժամագործ ։
Դալըստեան Զաքար աղա ։
Գայաեղեան Յարութիւն աղա ։
Գասպարեան մահտեսի Գաբրիէլ աղա ։
Գառնիկ աղա (մահտեսի) ոսկերիչ ։
Գասմանեան Գէորգ աղա ։ (2 օրի ։) ։
Խասմանեան Մանուկ աղա ։
Գասմանեան Յարութիւն աղա ։
Գասմանեան Նազարէթ և Համբարձում աղայք (2 օր)
Գասպարեան մահտեսի Յակոբ աղա ։
Գեղեցիկեան Գրիգոր և Յովհաննէս աղայք Կիւտահցի ։
Գուզուեան մահտեսի Յարութիւն աղա ։
Գուշպազեան մահտեսի Յակոբ աղա ։
Գրիգորեան Սիմճիկ աղա ։
Դալբասխեայ ընկերութիւն Էյիմլու ։
Եսայեան Յ ։ Սուրէն աղա Ախալկելցի ։
Եսայեան Պօղոս աղա ։
Եսայեան մահտեսի Յովհաննէս աղա ։
Եսայեան Հաճոս աղա ։
Եստեփեան Հէքեան աղա ։
Էրամեան Գէորգ պէկ ։ (5 օրի ։) ։
Երէցեան Մինաս աղա ։
Էօրտաճեան Կարապետ աղա ։ (2 օրի ։) ։
Զարդարեան Գէորգ աղա ։
Զարդարեան Կարապետ աղա ։
Էլմաեան Պետրոս աղա ։
Էմմաեան Պետրոս աղա ։
Թադէոսեան մահտեսի Հաբէլն աղա ։
Թադէոսեան Վրմանէս աղա Ժամագործ ։
Թոշճի պաշի Յարութիւնեան Հաբէլ աղա ։
Թիւրեաբլեան Կարապետ աղա ։
Թիւրեաբլեան Սուրէն աղա ։ Ազգ ։ խորհրդեան Ընկեր ։
Թոզոմլեան Պիհան Եփեճի ։
Թօխատցի մահտեսի Յակոբ աղա ։
Իլխաթաշեան Հաճատ աղա ։
Իւզաբլեան Նազարէթ աղա ։
Խաչատուրեան Միքայէլ աղա ։
Խուսպեսբեան Գէորգ ա ղա ։
Կիւլլէնկ Հաբէլ աղա ։
Կիւլլէնկեան մահտեսի Կիւլլէնկ աղա ։
Կիւլլէնկեան Կիւլլէնկ աղա Կեսարացի ։
Կիւլլէնկեան Սերոբէ աղա ։
Կիւմիւշեան Հաճեցեամ աղա ։
Կիւմիւշեան Յարութիւն աղա ։
Կիւմիւշեան Յովհաննէս աղա ։
Կիւմիւշճի մահտեսի Աբրահամ աղա ։
Կիւմիւշճի Գաբրիէլ աղա ։
Կիւմիւշճեան Գաբրիէլ աղա ։
Հասմամճեան Գասպար աղա ։
Հասմամճեան Սարգիս Եփեճի ։
Հաճեցեամ աղա Սամամիացի ։
Հիւնքեար պէկլեան Սպասին Եփեճի ։
Հարմնց մահտեսի Աբրահամ աղա ։
Հնոնճոցեանց Պետրոս աղա ։
Ղազարոսեան մահտեսի Խաչիկ աղա ։
Ղազարոսեան Գրիգորաստաւ աղա ։
Ճէնտալեան մահտեսի Գաբրիէլ աղա ոսկերիչ ։
Ճիվելեկեան Ղազարոս աղա ։
Ճիվելեկեան Յովհաննէս աղա ։
Մարտիկեան Ղեւոնդ աղա ։
Մարտիրոսեան Գրիգոր աղա ։
Մահտեսի Պետրոս աղա վանցի Էրէցխոս Ազգ ժամատոյ ։
Մանիկեան մահտեսի Մանուկ աղա ։ (2 օրի ։) ։
Մանուելեան Յակոբիկ աղա ։
Մանուելեան Պօղոս աղա ։
Մանուկեան Յովհաննէս աղա ։
Մոտուկեան Սինեքերիմ աղա ։
Մկրտումեանց Մկրտիչ աղա ։
Մնջոյեան մահտեսի Միքայէլ աղա ։
Մխիթարեան Միքայէլ աղա ։
Միհաիկեան Ճիվան աղա ։
Միհաիլեան Խաչատուր աղա ։
Միհաքեան Վարդերես աղա ։
Միքայէլեան Սամուել աղա ։
Ս ովսեփեան Տօքթօր ։
Մուտահէճեան Յակոբ Եփեճի ։ (2 օրի ։) ։
Մօսիկեան Յակոբ աղա ։
Մուրատեան Գէորգ աղա ։
Մուրատեան մահտեսի Մազաք աղա ։
Յակոբեան Պօղոս աղա տատեքար ։
Յովհաննէսեան Հայրապետ աղա ։
Յովսէփեան Կարապետ աղա ։
Ղէրսեհեան Գրիգոր աղա ։
Նիկողոսեան Պետրոս աղա ։
Նորատունկեան մահտեսի Գրիգոր աղա ։ (2 օրի ։) ։
Նորատուկեան Յակոբիկ Եփեճի ։ (2 օրի ։) ։
Նորատունկեան Սիմճիկ աղա ։ (2 օրի ։) ։
Շահաճատանց ընկերութիւն Սեբաստիոյ ։
Շամամեան Հաճոս աղա ։
Ռէզոնեան Մկրտիչ աղա տարազի ։
Ոզոնեան Պարսկաստ աղա Ժամագործ ։
Չայեան մահտեսի Պողոսատար աղա Բինկեանցի ։
Չայլաքեան Կարապետ աղա ։
Չէլեկեան Գրիգոր և Յովհաննէս աղայք ։
Չրտաճեան Սարգիս աղա ։
Չրտաքեան Նիքողոս աղա Ախալկելցի ։
Չօլագեան Մանուկ աղա ։
Պալեան Սարգիս պէկ ։
Պալեան Ընտանեկի Եփեճի ։
Պալեան Յակոբ Եփեճի ։
Պալըքճեան Հաճատ աղա ։
Պոտաքեան մահտեսի Խաչիկ աղա ։
Պարտիզպանեան Հաճոս աղա ։
Պարոնեան Նիկողոս աղա Սեբաստացի ։
Պէյլերեան Խոտալ պէկ ։
Պէյլերեան Սահակ աղա ։
Պերպերեան Սարգիս աղա ։
Պէշիկեան Միքայէլ աղա ։
Պօղոսեան մահտեսի Գէորգ աղա ։
Պօղոսեան Յովհաննէս աղա ։
Պջոմճեան Բիմէն աղա ։
Սապաեան Հաճատ աղա ։
Սահակեան մահտեսի Յարութիւն աղա՝
Սարգիս (մահտեսի) աղա ոսկերիչ ։
Սարգսեան Կարապետ աղա ✗
Սերոբէ (մահտեսի) աղա ։
Սերոբէեան Էրամեակ վարժուհի ։
Սերբեան Յարութիւն աղա ։
Սերոբեան Տօքթօր Եփեճի ։
Սէյրէնպատէ մահտեսի Սահակ աղա ։
Եփեբեան Նշան Եփեճի ։
Սիմոնեան Յակոբ աղա ։
Սմրատեան Յարութիւն աղա ։
Սուլթանեան Ղեւոնդ աղա ։
Սուրենեան Յովհաննէս Եփեճի ։
Սուտիջոլեան Կարապետ և Բաբաղ աղայք ։
Սահակեան մահտեսի Միքայէլ աղա ։
Վարպետեան Աբրահամ աղա ։
Վարպետեանց Գրիգոր աղա Գօզոլուեան ։
Վարպետեան Ջաղիս աղա Թոշճիպաշի ։
Վարժապետեան Գէորգ աղա ։
Քոսիկեան Աբրահամ աղա ։
Տաճեան Յ ։ Աբաքէլ Սիսակ Եփեճի ։
Տաճեան Պ ։ Աբաքէլ Եփեճի ։
Տաճեան Պ ։ Միքայէլ պէկ ։



ՄԻՈՆ

ՀԱՏՈՐ ՏԱՐԻ
ԹԻՒ 4.

ԱՄԱՍԱԳԻՐ

ԱՊՐԻԼ 30.
1868.

ԸՕԳՈՒՑԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԴԱՍԱԿԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Անդդ իւր ծնած վայրկենին չունի այնքան արժանաւորութիւն, որքան հարկ է ունենայ իւր բարոյական և իմացական յատկութեանց զարգացման ժամանակ. նա ի սկզբան կը նմանի նորածոյ տունկի մը, որ կարօտ է մշակութեան. որուն պէտք է հոգ տարուի, հերկելով այն հողը, ուր նորա արմատը հաստատուած է. կտրելով այն անպիտան ճիւղերը, որք տունկին մնդեան, աճման եւ պտղաբերութեան արգելք կը լինին: Անտունկն ալ նմանապէս պէտք է մշակուի. նա խնամք կուզէ և իրաւամբ, խնամք բազմատեսակ. քանզի ոչ միայն տունկին կամ անասնոյ պէս լոկ կենդանական մնդեան և աճման կարօտ է, այլ իւր մէջ զերազգային զօրութիւն մ' ալ կայ որ առաւել անմահութիւն կ'ընդունի, զոր ևս զարգացնելու և իւր կատարելութեան հասցնելու է: Նա անկեցաւ իբր ծառ ընտանեաց պարտիզին մէջ, իբր զերդաստանի աշխարհին մէջ. մշակութեան և խնամոց կարօտ է, որ կարողանայ մեծամեծ բաներ գործելու: Այս տունկը մարդկային օգնութեանց յանձնուած է. պարտի մարդկութիւնը իւր այս պարտքը հատուցանել. քանզի մանուկի մշակութենէն կախեալ է մարդկութեան երջանկութիւնը և թշուառութիւնը: Այն մանկական պարտէզին մէջ պիտի սրաշահ մարդկութեան վիճակը. այն ծառէն պատրաստ պիտի քաղէ մարդկութիւնը օգտակար կամ վնասակար, քաղցը կամ դառն. այս ծառը երբ իւր նպատակին համեմատ մշակուի, այն ժամանակ ապրին և մարդկութեան երջանկութիւն պիտի պատրաստէ: Երբ այս մանկական տունկին նախկին

անկման ձգտումները, անպիտան ձիւղերը չար կիրքերն ու անբանական յօժարութիւնները յատաւին, նա պտղաբեր կ'ըլլայ. այն առեն բոլոր մարդկութիւնը ամեն ժամանակ կնայ ծառին պտուղը կը ճաշակէ. այս մարդ մշակելուն անունը՝ դաստիարակութիւն կը կոչուի, որ շատ մարքեր հոգնեցուցած է իրաւամբ, և պէտք է որ հոգնի մինչեւ այս արուեստը կատարելութեան հասցունէ: Քանզի այս բանը մարդկային արժանաւորութեան հիմն ըլլալով, ուր որ ուղիղ դաստիարակութիւն չկայ, հոն չկայ մարդկային արժանաւորութիւն. հետեւաբար և ոչ մարդկութիւն իր բուն ահմանին համեմատ, այլ մարմին անհոգի: Բոլոր մշակները դաստիարակ կը կոչուին, որք նախ և յառաջ ծնողք են մանկան հոգին ու մարմը. վասն զի ա մեկնէն յառաջ անունք անկեցին այն ծառը մարդկութեան պարտիզին մէջ, ուստի նախ և յառաջ նոցա պարտքն է մշակել մանուկը իր օրօրոցին մէջ. քանի որ նա դեռ մէկ դպրոցում մի ունի. մինչդեռ նա բանականութեան նշոյլը միայն կը կրէ իր մէջ: Այն տեղին մէջ մանուկը պիտի մշակուի, ուր կը բնակի, և ուր առաջին անգամ դգալի լոյսը տեսած է. քանզի այն տեղացին նորա աշխարհն է, հոն կը գտնէ իր ուշադրութիւնը դրսուած բոլոր առարկայ, և իրեն հարմար մարդկութիւնը նորա ծնողքն, ազգականքն ու մերձաւորքն են. այն տեղացին մանուկի փորձառութեան տեղին է. այն տեղացին երախայի առաջին դպրոցն է. հոն նորա սրտին մէջ արմատ պիտի բռնեն բարոյականութեան և իմացականութեան վերաբերեալ ամեն բան, ուստի այն տեղ պէտք է տեսնել բարոյական լոյսն ալ. տեղեկի մէջ ամեն տեսակ աշխատանք, հոգ և խնամք կը պահանջէ մանուկը, զորս կատարել կը պարտաւորին ծնողք անխոչ ջանիւք և կարողամտութեամբ: Ծնողք պիտի կրթեն մանուկները ա մեծաօրինաւոր և խոհական դիտողութեամբ և զգուշութեամբ, ոչ երբեք և ոչ մի վայրկեան չպիտի թողուն որ մանուկները իրենց կամքը կատարեն. պէտք չէ որ նոցա ձայնը չի հանելու կամ սիրտը չի ցաւցընելու համար փոքրիկ թոյլտուութիւն մի ընեն անոնց կամեն հաճոյելը. և ոչ պէտք է խրբուին նոցա սաստիկ ողբ ու լացէն: Ընդհակառակ խիստ նուազ կարեկցութեան արժանի է, իսկ մեծ մասը աւելի նոցա անտանելի կրից արդիւնքն է: Մանուկը ոչ բովհետեւ չունի զօրութիւն անձամբ անձին իր կամքը կատարելու, ուստի լացով կ'ուզէ վախցնել իր կամացը արգիլը եղողը. այս սկզբունքը թէ և շատ առեն է վեր կը բարողուի, սակայն մինչեւ ցայժմ ոչ ոք չ' գործ դրած է. քանզի նոյն իսկ ծնողք տակաւին հասու չեն այս սկզբան ճշմարտութեանը: Ամեն ծնողք այնպէս կը կարծէ որ մանուկները երբ սաստիկ լան և ողբան, որովհետեւ գեռ նոցա անդամները փափուկ են, և չունին զօրութիւն դիմադրելու արտաքինոց պիտանեաց, կը խանգարուին և այն անդամոց օգտակը կը լուծուի. ուստի ամեն ինչ որ կ'ուզէ մանուկը կը կատարեն, որով թէ անոր պահանջումը անտարտ կ'ըլլայ, թէ անհնարին հաճոյքներ կը տածէ, և թէ երբ կը մեծնայ, կ'ըլլայ անբարոյական և կամազուրկ հրէշ մը:

Իսկ անձ մը՝ որ կամազուրկութիւն ունի, նա ամեն անտանելի անհարթ դժուարին գործերու կը ձգտի առանց պատկառելու. մեծ մասը կը գործեն և սաստիկ թշնամի կը դառնան ծնողք իրենց զաւակաց երբ կ'լսեն թէ "Մեղքիչ մը մեծնայ, այն առեն կը կրթենք": Մինչդեռ մանուկը ծնած

օրէն կրկին տեսած ու լսածն ամփոփել։ Փայտ մը Թոզ եղած ժամանակ կը չոկուի. հիւանդութիւն մը չծանրացած կը բժշկուի, մանուկն ալ իւր փոքր հասակէն կը կրթուի. ասոր հակառակ սխալ դրութեան վնասները չատ եղած են։ Ալ սակայն այսպէս ըսելով չի կարծուի թէ անխնամ ձգելու է մանուկը. ոչ, անխնամ Թոզուն ալ նեղելի չէ. որովհետև առողջ հոգին առողջ մարմնոյ մէջ կրնայ գործել, ասկա պէտք է որ մանուկները երբէք մեղկացուցիչ փափկութեամբ չմեծնան, այլ իրենց հասակին նեղածին չափ ամեն տեսակ դժուարութեանց վարժուին, զգուշանալով բնական կազմութիւնը խանգարող առիթներէ և ներգործութիւններէ։ Փորձով հաստատած է որ 100 հոգւոյ զբօսութիւն ունեցող գոյացութիւնը 200 հոգւոյ ծանրութեան մը չի կարող դիմանալ. ընդհանրապէս ամեն գոյացութիւն իւր զբօսութեան համեմատ գործ կը կատարէ. 4, 4 ալ 8 կ՚ընէ. երկու 4՝ 8ին աւելի արդիւնք չեն կրնար ունենալ. այսպէս ալ ի՛նչ փափուկ, անզօր և տկար մանուկ մը չէ կարող իւր զբօսութենէն աւելի տատակութեանց դիմանալ. ուրեմն մանկան բնական կազմութիւնը ճանչնալու է։ Սակայն ահա դիւրագին մանկունք առտպ, տկուն և քաղաքային մանուկներէ աւելի բարեկեանն են. այո, ճշմարիտ է այս. այլ տակէ չհետևիր որ ամեն կազմ այդ տատիճան խոտութեան կրնայ տոկալ. նոյն իսկ գիւղացւոյ մէջ տկար կազմութիւն ունեցող մանուկը միօրինակ պահելով մեռած է, մինչդեռ եղած տարբեր խնամուներ՝ տարեկան յայտ կար. տակէ կը հետևի որ մանկան առանձին դժուարութեան տոկալը չէ թէ առողջութեան պատճառ է, այլ նշան է թէ անոնք խիստ առողջ կազմուած. քանզի տղայք գիւղական կենցաղի մէջ տարեկան մէջ, ոչխարներու հետ բնակելով քաղաքային ղեկուցիչներ նշոյլն անգամ չեն տեսներ, Թոզ այս. մանուկները դիւղերու մէջ իրենց ծնողքն, ընտանիքն ու ազգականքը միայն կը տեսնեն. որ դժբաղդաբար քաղաքային մանուկներուն մանկական անունկին մէջն անգամ ամեն տեսակ մարդիկ կը տեսնեն ու անոնց հետ կը կենակցին, մանաւանդ նեղկայ ժամանակիս մէջ ուր և իսկ ազգի մը ընտանեաց ատն մէջ կը գտնուին օտարազգիք պանդուխտ ընտանուրութեանց տէր, տիկինը՝ մարդկութեան երջանկութիւնը պատրաստող մարդը, մանուկը իւր իրկին առած իւր սեռին անվայել խոսքեր կը խօսէր։ Այս ապիրատութիւններէ հեռի մնալն է գիւղական մանկանց բարոյապէս առողջ հոգեյոյ տէր ըլլալը։

Մեն չափազանցութիւն պիտանի կար է, և ամեն բանի չափաւորը օգտակար. ծնողք պարտական են իրենց կեանքը մաշեցընելէ այս տուներէրը օրինաւորապէս միջին ճանապարհով զարգացընելու համար. մանուկի սիրտը պէտք է մաքրուի, խիղճը սրբուի, և միտքը լուսաւորուի, մշակուի և. այ, ուշադիր գործ, ո՞վ պիտի կատարէ այս ամենը. Թէպէտ այս գործը ծնողաց առաջին նըւիրական պարտքն է քան Թէ նոցա կեղրակուր և հանդերձ մատակարարելը, սակայն այս ալ անուրանալի ճշմարտուի մ՚է որ առանց նիւթական կարողութեան, հոգեզինը չէ կարելի լիովին մատակարարել. ի՞նչ պէտք է ընէ հոգւոյ՝երը ընտանիքը կերակուր և հանդերձ կ՚ուզէ. սանկ մարդուն բնական կարօտութիւններն են, զորս ձարելու համար ընտանեաց գլխաւորը՝ հայրը պէտք է վաճառատուն երթայ. ո՞վ ծնայ այս պարտաւորութիւնը կատարող, եթէ ոչ մայրը։ Այս բան են նշանակութիւնը ընդարձակ է. այս այն անընկճելի զօրութիւնն է, որ քաղաքական, և կ՚

ղեցական, աշխարհային և հոգևոր յարաբերութեանց կապերը իրարու հետ կ'ամրացընէ. այս այն հաւատարմութիւն հաստատող զօրութիւնն է, որ սերունդները իրենց ապագային, մեծատուններըն ապրանքներու հետ կը կապէ։ Ով մայրեր, ձեր պարտքը սուրբ մեծ է, ձեզմէ միայն կրնայ մարդկութիւնը իր արժանաւորութեան արժէքը ստանձնել. մարդկութիւնը մայրերու դրկայ պատուիրով պիտի ճոխանայ. մայրերը պիտի ընծայեն իրենց հայրենեացը անձնազոհութեան սկզբունքը ընդունող մանուկներ, որ բոլոր առաքինութեանց առաջնորդն է, և այս ամեն պարտքերը պիտի հաստատեն իրենց զաւակայ այն կերպերէն, յորոց ոման կամ տալ մանուկներուն։ Ան զի ինչպէս որ ջուրը հողի մէջ ցանուած սերմերը կ'ուռճացընէ, այսպէս ալ կաթը այն բարոյականութեանց սերմերը կը պարարէ նոցա սրտի հողի մէջ, զոր մայրական խանդաղատանքը ցանած է. հանգուցած ամեն ազգականութիւն, ամեն ազնուութիւն բնաջինջ կ'ընէ. ամարդութեան, անբարոյականութիւն քարերը կը հալեցընէ մայրական կաթը, որով սիրտը կակղանալով նորա մէջ ցանուած հունտերը մանանեխներըն քիչ ժամանակի մէջ կը բարձրանան և հանդուրանի կ'ըլլան երկնից և երկրի Արարչին։ Ասել է թէ ցածը բարձրացընել կը նշանակէ դաստիարակութիւնը. համաւելի ազգ կ'ըսել, մանուկը այնպիսի կեանի մը հասցընել, որ թէպէտ նոյն կեանին հանելու հաւար գոյացած է, սակայն չէ հասած դեռ։ Ամէն կը հետևի որ մանուկը դաստիարակիչ մայրը պէտք է այն բարձր կեանին վրայ գտնուի, պէտք է բարոյական էութիւն ունենայ այն կերպիչ անձը. որ պիտի կրթէ. մեծ գործ. որ խոշտոլ հիւսուածուքը, այլ գործ կ'ուզէ. խօսքով

բան մը չգար ի լոյս, դաստիարակ ե՞ղ մայրը պէտք է պիտնայ նախ իր օրինակով դաստիարակել մանուկը և ապա խրատներով։ (քանզի երախան առաջին անգամ խօսիլ չգիտեր). երբ մայրը կը խրատէ մանուկը հնազանդ գտնուիլ իրմէ մեծերուն և ինք չհնազանդիր իր դիտաւորին, իր տեսած խրատները ոչնչութեան մէջ կը կորչուին, մանուկն անով մեծապէս կը վնասուի մանուկը։ Արդեօք մէկ յատկութիւնն ալ այն է, որ աւելի իր աչաց տեսութեան կը հետևի, քան թէ ականջաց լսողութեան. մանուկը իր մօր, իր ընտանեաց վրայ բարոյականութիւն տեսնելով ինքն ալ նոյն ճանապարհը գնալ պիտի հարկադրի, քանզի այնպէս վարժեցաւ. ուստի ութիւնը շատ բաներու կը յաղթէ. "բազմամարդութեան սովորութիւն՝ ղնութեան առնու զօրութիւն"։ Հետևաբար պէտք է ընտանեաց մէջ արմատացած ըլլայ մաքրութիւն, պարզութիւն, հնազանդութիւն և սէր, զի ուր որ սէր կայ, հոն Աստուած կը բնակի. ապա ուրեմն այն բնակարանը երջանկութեան տեղի է ուր սէր, համակրութիւն և խաղաղութիւն կայ, թէ և հոն աշխարհային նեղութիւնները թափառին։

Ընտանիքը նաև մանուկին եկեղեցին է, հոն պէտք է աւելի աստուածպաշտութիւն։ Ընտանիքի խորհուրդը շատ մեծ է, զի ընտանիքը այն ամեն բանն է, ուր բարոյականութիւն կը քարոզուի, ապա և արքայական տեղ մի. ուրեմն ընտանեաց մէջ պէտք է օրէնքը տիրէ. օրէնք համապարտանակ, "ինչ որ կ'ուզես որ ուրիշները քեզի նեն, դուն ալ անոնց այնպէս ըրէ. եւ ինչ որ չես ուզեր որ ուրիշը քեզ ընէ, դուն ալ մի ըներ անոր"։ Այլ անիկ է սարսափելի այն ժողովուրդը, որոյ ընտանիքը՝ իրենց զաւակութիւնը այս

գաղափարավ կը կրթեն, ուր մանուկ-ները կ'ուսանին (1) մարդկութեան օ-գուտը հայրենեաց օգտէն, հայրեն-եաց օգուտը անձնականէն վեր դասել, և ընդհակառակն թշուառ է այն ազ-գը, այն ժողովուրդը, այն տէրու-թիւնը՝ թէ և ունենայ անթիւ զինւ-որներ, ճոխութիւն, իշխանութիւն, զօրութիւն և անառիկ բերդեր, երբ նորա ընտանեկան կեանքը հիւանդ է, երբ նորա գերդաստաններուը անբու-ժելի ախտերով վարակուած են, ուր աչք իւրեանց կանայքը լոկ պէսպէսի բաղձանքներին կատարող հաւներ՝ և որ գէշն է ատոնցմէն կը համարին. կը զլանան նոցա տալ մարդ բառի ներքա-յատակացեալ իրաւունքները: Հայրերը եռաբեռան չքնաղին դուռը չկրնալով ելլել՝ իրենց անձերէն զատ մէկը չեն տեսներ, այլ սակայն լքմտութեամբ խորհելով և քննելով որ կամ երթանիք կը տեսնենք որ ազգի, ժողովուրդի, եկեղեցւոյ, տէրութեան և վերջապէս բոլոր մարդկութեան արժանաւորու-թիւնը մայրերէն կախում ունի, զոր դարաւոր փորձերով հաստատուած կը գտանիք: Արդեօք Հայ ազգը երջանիկ էր, զի նորա կանայքը ամուսնական սուրբ խորհրդոյ վրայ տեղեկութիւն ունէին, և իրենց որդիքը անձամբ կը կրթէին. Հղիէ կ'ըսէ թէ նոցա պա-րապմունքը սուրբ Գրոց ընթերցուածն էին, որով կարող կ'ըլլային անտանելի նեղութեանց, թշուառութեանց և հալածանաց ենթակայ եղած տեննին անդամանդով միայ և արիութեամբ տանել առանց իրենց համեստութի-նը վտանգելու: Սակայն այսօր փոքր վիշտ մը կարող է վհատեցուներ զմեզ, կամ նուաստ հրապոյրանք մը զոհել կուտայ մեզ մեր ամենէն նուիրական

(1) Յայտնի է որ մերձաւորին վնասին օտարին օգնելը մարդասիրութիւն չէ, ոչ ալ օտարին վնասելը մերձաւորին օգնելը:

առանդը: Ինչ է ատոր պատճառը. եր-թէ ոչ ընտանեկան դաստիարակու-թեան պակասութիւնը. որով սկսան մարդիկ ոչնչ բաներուս վրայ երջան-կութիւն փնտռել, առանց դիտնալու որ լոկ այս աշխարհիս վայելչութեանց մէջ չէ երջանկութիւնը, այլ անոնց հետ կցորդուած պէտք է լինի առա-տաւոպաշտութիւնն ու բարոյական-նութիւնը, որք կարող են զմարդ եր-ջանկացուցանել ինչ վիճակի մէջ ալ որ ըլլայ:

Կանանց դաստիարակութեան կարե-ւորութիւնը ղգալի եղած է դարուս մէջ, ուր բարոյականութիւնը վտան-գած է. այս սկզբունքը ամեն ըս-տմիտ ընդունած է. սակայն գրեթէ բնաւ մէկը գործ դրած չունի. առանց գործոց մնռեալներն հաւատք. այս մեծ և աստուածային գործոյն համար ալ լոկ համակրութիւն արժէք չունի. քանզի մարդ դաստիարակիչը Աստուծոյ որդիներ պատրաստել է. աշխատութիւն և գոր-ծադրութիւն պէտք է, և ամեն անձն նաև բնութիւնն ալ պէտք է աչքի այս մեծ կարևորութիւնը գործադրելու համար. այս պարտաւորութենէն ոչ ոք ազատ է, ոչ տէրութիւն, ոչ հա-րատակ, ոչ հարուստ, ոչ ազքատ, ոչ եկեղեցի, ոչ աշխարհական և ոչ հոգե-ւորական. ամենքը միասին պէտք է վաստակին այս գործին համար. մա-նաւանդ հոգևորականը՝ որ մի միայն ինքն բարոյականութեան առաջնորդ կարգուած է, և միանգամայն լաւ ան-ւանուած է միաքերը լուսաւորելու և աղ՝ բարքերը համեմելու. զի ինքն աշխարհի լաւ եղողի աշակերտան ընտրու-թիւնած՝ անոր կամքը գործադրելու սահմանուած է. եթէ եկեղեցականը լաւ չեղաւ, վայ մարդկութեան, փըր-կութիւն չկայ, մեր այս խօսքը կը հաւաստէ արտաքոյ Փրկիչն ալ. "Ու-թէ լոյսդ որ ի ձեզ է՝ խաւար է, խա-

ձարն ոչնչաբ է։ «Եւ թէ» եթէ ապրի ան-համեմատ, ըն համեմատ»։ Աչխարհքս կանոնը պէտք է քրտինք թափէ մարդ-կութեան համար, նորա մանկութիւ-նը դաստիարակելով. քանզի իւր աչքն ալ՝ որուն աշակերտ ըլլալ կը պարծի, այս ընթացքով առարաց իւր կեանքը. նա քրտինք թափեց, և իւր արիւնը չխնայեց մարդու եղբեալ բարեգոր-ծութիւնը նորոգելու համար. բայց հոգևորականը մի է, և կամ ինչ բա-նէ յառաջ կուգայ։ Հոգևորականն ալ մարդ է, ծնունդ մարդոյ, Աղամայ սերունդ և ընտանեաց պատուղ։ Ահա, ահա ընտանեկան դաստիարակութիւ-նը դարձեալ կելլէ մեր առաջ. քանի որ հոգևորականը՝ եկեղեցւոյ մէջ ալն-կուած այն կենաց ծառը՝ նախ ընտա-նեկան սենեկին մէջ անկուած է. մինչ անկէ այն ժամանակ պտուղ կրնանք ուղել, երբ զանի կրթենք իւր մանկա-կան սենեկին մէջ. այս դաստիարակու-թեան խարհուրդը ոչնչաբ դիտողու-թեան առնունք, այնչափ ծանր և դժուարին հանդամանքներ կը ծագին մեր առաջ, այնչափ բազմազիմի են նո-քա առարկաները, զորս այժմեան ըն-տանեկան դրութիւնը անկարող կը գտնուի ամփոփել և կարգադրել։ Աինաք և սիրտ, խելք և կամք կանոնաւորու-թեան տակ ձգել, անհուն մըտրաշն-ւիլ ճանապարհներ ուղղութեան բե-րելը դժուար բան է։

Այսչ ինչ, միթէ դժուար ըլլալուն համար պէտք է դադրիլ. ոչ քանզի այս պէս վարուիլք մարդկութեան պատիւ ջներեր, յառաջադիմութեան նպաստ կին ալ հակառակ է. «յանդիման է ա-մենայնի աշխատութիւնը»։ Դաստիա-րակութեան համար ուրիշ սենեակներ ալ կը բանանք, հոն կը կրթենք մարդ-կութիւնը, այս սենեակներն ալ կը կոչուին Դպրոց, ուր ընտանեկան կեանց մանուկի արտին վերայ հատուած բարոյականութեան սերմերը ի-րենց կենատէտ պտուղները մարդկու-թեան ճաշակին մատուցանելու կը պատրաստուին. այս դպրոցի մէջ բա-րոյականութիւնը պիտի կատարելագո-ծուի, կատարելագործուի. ինչ մեծ գործ, որ իսոհական, ամենահմուտ, և մարճառութեան բովէն անցնող մար-դերու կը կարօտի, որ անձնասիրէր ձչմարիտ բարոյականութեամբ ձև-խատած անձերու միայն կը պատ-կանի, որովհետև այնպիսիք միայն առատութեամբ չանձնուած ծառը կըր-նան մշակել, պահել և պտղաբեր ընել. այսպիսեաց անուններ դաստիարակ կը կոչուին, այսինքն՝ մարդը իւր սահմա-նին հասցուցող, մարդը մարդ ընող. ըսելէ որ դաստիարակը մարդկութե-արժանաւորութիւնը պայծառ ցուցը-նող անձինք են. որ եթէ իրենց պարա-քը ճանչնան և գործադրեն՝ մեծամեծ պատուոյ արժանի են։ Աչքանի աղգի մը որոյ դաստիարակները հանապարհու-թենէն վրկիչ կ'անուանին, և ըստ այ-նմ կը պատուին. և վայ այն աղգին մանաւանդ մեզ՝ որ մեր դաստիարակ-ներին շատերը չպատուելէ զատ նա-խատինք կը կրեն, անօթի կը մնան, և պանդխտարաններու անկիւններն կը զլաւեն իւրեանց կեանքն, և ինչ է ա-նոր պատճառը —ընտանեկան դաստիա-րակութեան չըլլալն է. երբ տան մը հիմը խախտուած է, այն տանը ոչչաբ վերանո-րոգութիւն ընես, դարձեալ կործանման վտանգին ենթակայ է. ամեն քանէ յա-ռաջ ընտանեկան դաստիարակութե հոգ պէտք է տարուի, որ մարդկութիւնը երկնաւոր հօր կատարելութիւնքը իւր վերայ սեպհականէ, և այս հոգը այս խնամքը, այս չանքը նախ և յառաջ կանանց սեռին պէտք է տարուի, և այն գործեալ մնաւորականին յառաջ բարոյականին. պէտք է նախ սրտերը կրթուին։ Այսօր մարդկութեան երեք

ճաշէն աւելին պտոյլ մեւսած է . պրակ հետեւ նա անասնական կրից զոհ եղած , հեշտասէրեան մէջ վարակուած իւրեանց պտերքը փոխանակ Աթարչին սեզան և ախոռ կազմելու , մսլսլեն բնակարան կը յօրինեն . և իւրեանց գազաց և խորհրդոց կնդրուկը անմահ հաւերեանց աղբիւր կենդանի սիրոյն մատուցանելու տեղ փառաքաղչ Աշտարին կընուիրեն : Ժողովրդ մարդկութիւն . պտերուս վրայ հազ տար . պտերուս՝ ո՞ր ժամց վրայօք խորհրդածութիւն անգամ չես ըրած . պտերքը մշակէ , առանց քաղցրական իմացականը գտանութեան վիճակի կը հասցուն զմարդ . հանապազորեայ փորձերով ապացոյցներ շատ ունինք . որոնք գանազան դարերու և միանգամայն ներկայիս մէջ տեղի ունեցած են և կունենան , ոչ ապաքէն գարուս երկոտասարդութիւնը մեզ ըստ մտանեայ ուսմանց տեղեակ , սակայն քաղցրականութիւն չունենալով իրենց ինչ էակ ըլլալը մոռացած , ուրիշ էակներու գործերն իրենց կը սեպհականեն և կեանքերնին կը մաշեցնեն կռմանու և գիտութեամբ . գործեալ այս ամենուն պատճառը կանանց դասը տարակուսութիւն չըլլալն է մեզ ընտանեաց և մեզ գպրոցներու մէջ : Գպրոցը պէտք է ըլլայ աղջկան և կրթութիւնը աղջկան գտտուարակներու ձեռօք . արա հանուակ գրութիւնը նոյն աղջկութեան մեծ ձեռս կրսպասենայ : Երբ որ և իցէ աղջկ մը զանակներըը օտարազգայ գպրոցներու մէջ օտարազգայ ձեռօք գտտուարակուին , այլ նոյն աղջկ մանուկներու որոնց մէջէն կը վերնան աղջկան սէրը , աղջկան զգայմունքը , առանգութիւնը և սովորութիւնը : Ոչ այս , իւրեանց աղջկանունը անձերնուն վրայ ընդունին անդամ ա նարգանք կըհամարին արդէն զայն դաստուարակուին նպատակն ալ այն է . այս ամենէն վերջը եկեղեցինին ալ ուրանալ օտար եկեղեցւոյ կը յարին . որով ապրին թէ զօրաթիւնը և թէ գործ թիւնը կըսպառի . տղկ մը զօրաթիւը այնքան կը կրկնապատկուի օրքան նոյն աղջկը իրեն յատուկ արդ իւնաւոր գործներ և քաղցրական ուսուցիչներ և դաստիարակներ ունենայ : Հոս , սուբ , հաղածանք և ոչինչ չեն կարող այն աղջկը կործանել , երբ նորա պրպտոց պտերքը մայրական կաթի հետ քաղցրական դաստիարակութեամբ անած ու զօրացած են , այն ատեն թշնամիները կընկրկին . հարց աղջկանութեան վրայ ունեցած սէրն ալ կը լարէ և կ՚ընչացուն : Կա նանց սեռի աղջեցութիւնը ամենաատուիկ է արական սեռին վրայ . Հոս մտեցածդ պատմութիւնը անժխտելի ապացոյցներ կուտայ մեզ . ինչպէս Պա վիկնուհիք՝ Հռոմայեցւոց և Սափիւ նեանց մէջ մանելով ահաւոր պատերազմին կործանումն ընկրկեցին , նոյնպէս և Վրաստան անհաշտելութեան բորբոքը կրցան դիջուցանել և հաշտեցնել նորա ընտանիքը : Թող ամենք հաւատան հաւատայ որ արական սեռը կրթեալ կ՚ըլլայ , երբ կանանց սեռը կրթուի . մարդկային գեղեցկեայ այժմեան յորդահոս աղբիւրը այն ատեն պիտի ցամաքի , երբ կանանց սեռը պարզատրութեան վարժուի . երբ կ՚ըսեմք կանանց սեռի զարդը իւր բարոյականութիւնը ըլլայ և ոչ թէ շղարշը . այն ժամանակ մարդկութիւնը անմեղ գառն պիտի գառնայ : Մարդկութիւնը իւր հազ ունենալը պիտի իմանայ և հագուսի պիտի երկրպագանէ Աստուծոյ՝ երբ կանանց սեռը դաստիարակութեամբ խեղճանա ըլլայ և համոզմամբ ընդունի Ռանին Հօր սա ձշմարիտ պատգամը թէ « Հոգին Աստուած և երկրպագուայ նորա պարտ է հոգւով և ճշմարտութեամբ երկիր պագանել » . և ըստ այսմ կրթէ իւր մանուկները օրօրոցի մէջ . մէկ այս խօս

քերը դարերու պատմութիւնէ և նոր կայի համեմատութիւնք են. հինգե՛ր դարէ ի վեր Աղիշէի պատմած կանոնց վարուց և բարուց հետեւութիւնքն են։ Ինչ Հայաստանի ազատնին գերեզիկ կը խօսի թէ արշակ հարկատու է կամ նոյնց բարեպաշտական դատաստանութիւնը և թէ նորա պահպանութենէն ինչ չարիքներ յառաջ եկած են ազգին գլխուն։

Յակոբ Յովակիմ Պօ–ղոսեան
Պօլսեցի։

ԱՐՏՕՆԱԳԻՐ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆԱՑ ԽՐԻՄՈՒ

Այն արուեստագիրները, որոնք ժամանակ առ ժամանակ զանազան սերունդներ ընծայած են մեր ազգի գաղթականներուն, սեռակ մի յիշատակարաններ են, որոց մէջ կ'ամփոփին հիմնաւոր տեղեկութիւններ ազգային պատմական կեանքի նկատմամբ։ Իսկ ոչ բովանդակ այն օրինակ յիշատակարանները խորհրդածութեան ընդարձակ նիւթ կը մատակարարեն հայկական կեանքը հետախուզող պատմաբանին և բանասէրներուն, ուստի արժան կը համարինք հրատարակել ՈՐ քազմիս միջոցաւ այն արուեստագիրները և դաշնագիրները, որոնք ի վաղուց անտի կը գտնուին Ս. Ընծայից Պատրիարքական դիւանին մէջ, և շատ ուրախ կը լինինք, եթէ այլ և այլ վաստաւորեալ և կամ մանաւանդ անձանց մտապահածներն ևս հրատարակուած տեսնէինք։ Այսպէս ալ, այն օրինակ յիշատակարանները առաջ ելլայ կ'ուսանի հայկական պատմական կեանքին և կը պարզեն Հայոց գաղթականութեան շարժառիթները, այս և այն տեղութեանց մէջ ունեցած վարկն ու վարմունքը և միանգամայն իւր գործունէութեանց օգտակար կամ վնասակար հետեւանքները, որոնք մի փորձական դաս են հայկական ներկայի և ապագայի համար։

Այս անգամ կը հրատարակենք այն Արծնագիրը, որ 1779 թուականին տրուած է Սիսատրինէ Ռ. Ներսէս կայսերական հին Խրիմոյ հայ գաղթականաց, և որովհետև այս տեսակ գրուածոց հրատարակութիւնքն ևս առանց մանաւանդ խորհրդածութեան մեզ նմանին, ուստի քանի մի պատմական նկատմունքներ ընել տեղւոյն համարիր։

Իթէ Հայոց գաղթականութեան և հայրենեաց ամայութեան պատճառները մի կողմէն կը նշմարուին դառն գերութենէ, հարստահարութենէ և կամ շահախնդրութեան տարաբնակ փոփոխին մէջ, միւս կողմէն ևս կը տեսնուին այն ապահովիչ խոստումներու և արուեստագիրներու մէջ, որով զանազան սերութիւններ երբեմն դրաւեր են Հայ ազգի գաղթականաց մատղութիւնը։ Հայ ազգը, իւր հայրենեաց մէջ յամենուստեք պաշարուած լինելով թշնամիներէ և սարսափելի տագնապներուն չկարենալով տոկալ, իւր ոտքերական իշխանութիւնը կանգուն ժամանակէն ի վեր սկսած է գաղթել զանազան երկիրներ։ Նոյն այս ընթացքով շատ անգամ ևս վտանգ ապահովութեան՝ տատիկ վերքեր տացած է ազգային մարմինը։ Իթէ մի առ մի թուենք այս վէրքերը մեր նպատակէն շատ կը հեռանանք, մանաւանդ որ արդէն ղպալ են հայ յամենիկ պատերուն, ուստի բաւական կը համարինք կրկնել այս մասին ժամանակակից և փորձառութեամբ ճեղքած բանաստեղծի մը տողը թէ. «Ծառն՝ արմատով ծառ, պտուղն՝ հիմամբ է պտուղ և հետևատիպ ազգ մի, գլխա-

ուրաքանչիւր իւր հայրենիքով և հայրենի յիշատակարաններով է ազգ։

Ընդարձ՝ հայ գաղթականները երբեմն ազատ մնալի անդորրութիւն և կեանց յաղագս կրօնական դիւրութիւններ են վայելեր օտար հողերուն մէջ, քան թէ հայրենաբնակները հայրենեաց մէջ. բայց շատ անգամ ևս հալածներով և բիւրեւրով անցագործներ են մուտացուելու ազգին վրայ, և իրենց վատարարքովը պատճառ են դարձեր հայրենասիրական յուսահատեցման և ուժոյ անկարութեանը։

Հայոց գաղթականութեան անցքերը որպէն յայտնի են ազգային պատմութենէն իւրեանց տխուր հետեւանքներով, որոյ վրայ մանրագատում ընելով չենք ուզեր ընդլայնել մեր նեկայ նկատմունքը. իսկ զանազան ազգութեանց մէջ հնարտուած արուեստութիւններէն մի քանիսը կամինք յիշատակել, որպ կ'երեւի որ Հայք միշտ ինքնուբոյն վարչութեան փափաք ունեցած են և հալածուածք ուրեք նեցած են և հովանաւորել ուզած իրենն և հայրենասիրական ջահն, նոյնպէս և հայ գաղթականաց գործունէութեան և հաստատութեան համար չեն պակսեր նոցա խղճը լքուցանել։

1. Ղրիմեցւոց գործուն մէջ | Հնդստանի Թագաւորութեան կամենից և | Լեհերէն կամ Իլխով քաղաքաց հայ գաղթականները Կաղմիր Թագաւորի հրովարտակաւ ազգային իրաւունքներ կրնտանան, հոգեհոգ գահ կ'ունենան Ալ կաշառով, և 12 առաջնակարգներէ բաղկացած դատարան անկախօրէն անօրինելու իրենց ազգային գործերը. իսկ երկու գար ետքը Ալեքսանդր Թագաւորի օրով աւելի կ'ընդարձակուի ազգային դատարանի իրաւունքները։ Սակայն՝ չընայելով այս արուեստութեանց, | Հնդստանի գաղթականները. կրօնական վիճակը կը գլորին, կ'անհետանան, և այսօր միայն իրենց գերեզմանաքարերը և հնէից հետք փլատակները կը մնան։

2. Ընտրական տերութեան գաղթականի հայերը ազատ իրաւունքներ կրնտանան նախ Վրլա հայաքաղաքի մէջ և ապա Կարտոս ջ. հրովարտակ կան. հայոց նախ Պաշտպանը ազատ քաղաք կ'անուանին, ուր և կը հանուանուի ազգային դատարան, 12 հոգւով ծերակոյտ և քաղաքապետ. և այս ազատութիւնքը Ֆերդինանդ հայոց ժամանակ աւելի կ'ընդարձակին։

3. Ընդհանրապէս հայ գաղթականաց մեծամեծ արուեստութիւնները ազգին յայտնի են, ուր հայագրի Ոսկանները (իշխանները) երկրի տերութեան վրայ անգամ ազդեցութիւն կը բանեցընէին։

4. Օսմանեան տերութեան հայ գաղթականաց վայելած արուեստութիւնքը առաւել քաղմազատիկ են, որոց մէջէն, առանց անդեռներըը Թուելու, բաւական է միայն յիշել ներկայ Սահմանադրական վարչութեան ազգային իրաւունքը, որ եթէ իրականապէս և օրինաւորապէս գործադրուի և իւր ազդեցութիւնը բոլոր Թուրքիոյ հայոց վրայ տարածուի, ազգասիրութեան մեծամեծ բարիքներ պիտի յառաջացնէ և իւր Թագի ակղուններով հայկական պատմական կենաց մէջ նոր դարագլուխ մը պիտի կազմէ։

5. Ինքնուբոյն վարչութեան արուեստութիւններ կրնտանան Ռուսիոյ տերութենէն Ղրիմեցի հայ գաղթականները, ինչպէս պիտի տեսանին ընթերցողք Ազգագրի պատմութեան մէջ, թէպետ և այժմ իրական և վնասակար գործադրութիւնը անցած է։

Ոգեղնք այն վիճակագրի Պաշտպանը, որ ծրագրած է Ղիտատարինէ կայսերհոյ և Ղրկամնաբազատ Յունէ ի արքեպիսկոպոսի հատանութեամբ հայ

կական ինքնութեան Թագաւորութիւն հաստատելու համար, իբրև գաղնադկից ռուսական տէրութեան։ Այս ծրագիրը անցեալ տարի հրատարակուած տեղանք քանի մի հայ պարբերական թերթերու մէջ։ Թողունք երբ ջանկայիշատակ Երուանդ ին ընտրուած Պայմանագիրը Ընտրութեան ընդարձակ դատնանդի անկախութեան համար, որ պ գործադրութեան մասին, ինչպես կը հաստատէին քանի մի հրատարակութիւնք, երանելի Հայրապետը մեծ ազդեցութիւն ունեցած է եղեր խնդիր առաջարկել Ռուսիոյ տէրութեանը, եթէ վարձահատ մահուամբ չփոխուէր աշխարհէս։

Այս արտօնական գիշատակարաններըը մեծ ապացոյց են հավանաբար տէրութեանց վստահութեանը և Հայոց ազգի անխարդախ հաւատարմութեը։ Այժմ կը հրատարակենք ահա խնդիրս հայ գաղթականաց Ընտօնագիրը և կը խոստանանք ուրիշ անգամ՝ի լոյս ընծայել Ռուսաց Կեդրոնական հայաբեր հրովարտակը, զոր 1813 ին ընտրած է Ալեքսանդր Ա. կայսեր հրամանաւ, որ 1828 ին ընդարձակեցաւ ի ցոց սիրոյ և գոհութեան՝ նոյնպէս անձնաւորը հաւատարմութեան, որ ցուցած են Ռուսիոյ տէրութեանը։ Այս հրովարտակները հրատարակուած են Ռուսաստանի մէջ, բայց մեզ անյայտ է, ուստի և նոյնութեամբ՝ի լոյս կ'ընծայենք, ինչպէս որ Պատրիարքարանիս մէջ գտնուած ձեռագիրներն են, թէպէտ և գրութեան ոճը բաւականին անհարթ է։ Խնդիրս գաղթականաց Ընտօնագրէն՝ի բայ կը թողունք միայն վաճառքներու ընդարձակ ցուցակ մի, որուն մէջ իբրև արտօնութիւն որոշուած է իւրաքանչիւր արուեստից սահմանին բերուելիք վաճառներուն մասը։ Արտիւեան մաքսական օրէնքը փոփոխական լինելով դիտենք որ այժմ մաքսերը չիշեալ ցուցակին համեմատ չեն։

Ահա արտօնագիրը։

"Ընդհանուր ողջոյնութեամբն ոյ մեք Հիւսուարինէ երկրորդ Կայսերուհի և ինքնակալուհի ամենայն Ռուսաստից (Ռուսաց), Մօսկուա՝ Կիեւու՝ Վլադիմերու՝ Նովգորոդու, Թագուհի Բասանու, Թագուհի Աստրխանու, Թագուհի Սիբիրու, և այլն, և այլն, և այլն։

"Հաւատարմին մերոյ Արիսեան Պետրոս վարդապետի և ամենից հաստարակութեանց խոհմոյ քրիստոնեից Հայոց դաւանութեամբ, ամենից կողմանցն առ հաստարակ և իւրաքանչիւրոց յատուկ անձանցն՝ մեր Կայսերական ողջոյնածագունեղ բանն։

"Ի հաստարակ կամեցողութեամբ առաջադրութիւն ձեր յայտեցեալ Ընդհանրական, մեք վերահասու եղաք՝ի ձէնջ առաքեցեալ առ մեզ՝ի Պահչասարայ անցեալ ամի, ժղ երորդի յունուարի ամսուն, հաստարակութեամբ և յօժարակամ հիմնասրեալ խնդրոյն առն ազգասութեան ձեր ամենեցուն՝ի սպառնալի ընդ և տատապանացն ընդունմամբ՝ի յատկութենական բնակութիւն՝ի Կայսերութեանս մեր՝ամենայն Ռուսաստից (Ռուսաց) հնարհնդ հրամայեմք մեք, ոչ միայն ընկալնու զձէզ զամենեսեան ընդ ամեն ողջոյնածագունեղ հավանութեամբ մերով, և սրպէս սիրելագունեղ զաւակ հանգուցանել՝ի ներքոյ նորին առատրել զկեանս այնքան բարեկենդանալ, որքան ցանկութիւն մահկանացուց և անդադար ջանացողութիւն մեր առնոյանն հաստ ցանել կարէ, հետեւելով սրին Թագաւորելոյ հնարհնդ ձեզ արդիւնաւորիլ՝ի Տէրութեան մերում, ոչ միայն այնպիսի ամենիւք իրաւամբք և առաւելութեամբք, որպիսեաք ամե-

նայն ժողովուրդք մեր ՝իմինչ և ՝ի նախ-
նեաց մերոց ՝ի վաղնջուց ժամանա-
կաց վայելեն՝ այլեւ բաց յայնմանէ
հրամայեմք մեք ,

«Նախ՝ առ ՝ի ներկայական անդրա-
բնակութեան ձերոյ ՝ի գաւառին Ա-
ղձիս մեր իսկ ծախիւքն բերել ՝ի Խո-
րոնից զայն ամենայն ինչս ձեր , զոր
միայն բերելն կարելի իցէ՝ որ և կար-
գաւորեցեալ ՝ի մէնջ գրամոյն ապրէն
կատարումն եղեալ է ։

«Երկրորդ՝ վասն յարմարագոյն բը-
նակութեան ձերոյ ՝ի գաւառին Աղ-
ձից զատեալ յայլոց բնակչացն տալ ձեզ
՝ի ջրջանակի ամրոցի սրբոյն Թէոդո-
րիայ Ուռատաքն , ըստ սահմանակար-
գութեան, Տօնոյ զօրացն Թողլով՝ի տե-
ղիան վասն խոստաձարակութեան ամ
բոյականացն երիս հազար գեհեռթի-
նա՝ և վասն բնակչացն չորրորդ մասն
ձկնորսութեան Տօնոյ գետոյն . բաց ՝ի
յայսմանէ զոր նայն գետոյն տեղիք
գան ՝ի նոյն ջրջանակէն ՝ի վերուստ
բերանէ գետոյն Տեմիրնիկոյ , և եթէ
անբաւական լիցի տեղին վասն բնա-
կութեան ձերոյ և ջրջանակի ամրոյին
Աղձոյ իբրեւ խնդիր բնակութեան
ձերոյ ձկնութիւնքն ամենազրկեալ-
քար ընտրեմք ձեզ յաւխտենականա-
քար ՝ի յարդիւնս և ՝ի շահաւէտու-
թիւն ամենից հատարակութեանց
ձերոյ առանց պահանջելոյ բնաւ հար-
կիս ՝ի գանձարանս մեր ։

«Երրորդ՝ յետ յատկացուցանելոյ
զընտանեաց թիւն ժողովրդական կա-
յութեան ամենազօրմնծաքար տանք
ազատութիւն ամենից արքայական հար-
կաց և ապատուրութեանց , որպիսի
անուամբ և իցէ մինչեւ ՝ի տան տա-
լիս , այլ յանցանել այնր ժամանակին
պարտաւորին վճարել մերում գանձա-
նին իբրաքանչիւր տարւոջ վաճա-
ռականքն յընչից իւրեանց հարիւրին
մին արհեստաւորք և մշտանիք (բաց
զաքացիք) յիւրաքանչիւր տանց երկու
ըռուպլի . իսկ գիւղականք և հողա-
գործք ոչ ՝ի յանձանց , այլ ՝ի գեռնոյ
համարելով յիւրաքանչիւրոցն երեսուն
տեսեթին՝ պարտանգին տալ իւրա-
քանչիւր տեսեթինից ՝ի տարւոջն
հինգ կօպեկ . չբաւար գիւղականքն՝
օգնեցեալ լինելոց են ՝ի գանձարանէ
մերմէ . ոչ միայն բաւականացուցմամբ
առաջին տարւոջ , այլեւ վասն երկրա-
գործութեան զանազան սերմամբ յո-
րենոյ , անասնովք և ամենիւք պէք ան-
անաշինութիւնս պատկանին պէք և
պարտաւորին առնել ըստ ճշմարտութեան զա-
մենայն ջանիսիկ ՝ի գանձարանս դնիլ
տան ամոյ . և վասն չինելոյ տանց նո-
ցին փայտք և այլ նիւթք տացի ՝ի
գանձարանէ առանց պահանջելոյ զդի-
նոյս նոցին . հարեւանքն ՝ի նոցանէ ՝ի
նոցա տրեցեալ տեղիան կարեն չինել
տունս, խանութս, անբարս, փայտրիքս և
այլ ամենայն զոր ինչ կամիցին յա-
տուկ և սեպհական ծախիւքն իւրեանց,
և եղիցին ամենեքեան հատարակօրէն
միշտ ազատք յամենից պօտոյից
(հարկաց շինուածոց) . բաց յայնցանէ
մինչ պատերազմական պինուորք տա-
բնակութեամբ ձերով անցանիցեն, յա-
խտեան եղիցին ազատք ՝ի տալ պատե-
րազմական պինուորս . բայց եթէ ըստ
ինքեան ծառայել յօժարիցէ ոք ։

«Չորրորդ ամենազրկմնծաքար յանձ-
նեմք Աւարկաեան Պետրոս վարդապե-
տին մինչեւ ցմահ նորին զհովուութիւն
ամենից այց եկեղեցւոյ ընդ նմին ՝ի
խոհմոյ Հայոց , և հրամայեմք նոցա
շինել զեկեղեցիս և զանպակատունս
և ըստ ծխի և օրինաց նոցին աղա-
օրէն գործածել զամենայն եկեղե-
ցական պաշտաւնունս և հոգեւորական
արարողութիւնս . և որպէս վերոյի-
շեալ վարդապետին նոցին՝ նոյնպէս և
Հայոց քահանայքն եղիցին միայն
ընդ իշխանութեամբ Հայրապետին որ

՚ի Ա. թարառեան Հայրապետական Աթոռն Լիճ։

«Հինգերորդ՝ զկնի բնակութեան ձերոյ ՚ի յաւուրս անուանեցեալ Լախիջեւան ՚ի կալն Պօղոսեանցին տալավ ման խաւսաձարակութեան նայեալ քան զնաքին երկուտասան հ. (1000) տեսեմիկ նըւ պահանջ, հրամայեմք հաստատել անդ ժողխաբրամի (իրաւարան) եւ անդ քան ձերոյ օրինաց և սովորութեանց վարել գաւառացանս և գիւղաւանս, քնարելով ՚ի ձէնջ դդատաւորս վիճակաձգութեամբ, որք ևս արդիւնաւորեցեալք լեցին առաքինաբար և վարձիւք քան կարկապրութեան Աղօնգաւառի, և եղիցին ենթ ի յառնութեան Լամերսանվիսական (փախարքայական) կառավարութեան ՚ի քաղաքն և ՚ի գիւղօրայս սակս պահպանութեամբ ամենայն հարկաւոր պատահմանց կարգեցի յաւուրս անձն ՚ի Ջուղա ասայ (Ջուղայ) որ և ոչ ունիցի մանակցութիւն գաւառապետական գործոյ այլ բնակչացն. այլ եղիցի միայն պահպանիչ և այցելու նոցին։

«Վարձեալ՝ չեմ մանաւանդ խրատքանչիւրոյ եւ ընարելոյ վասն ինքեանց զօրավարի և իշխ ձեզ կացուցիւն ՚ի տերութեանս, այնպիսեացն հնարհեմք արդիւնաւորել ՚ի յաւուրս մանկանց նաւարգաբար չետապուխքն խրեա ց այնորիւք ամենիւք, զոր բան հաստատակամ կանոնադրութեան մերոյ խրատքանչիւր ումեք ՚ի ձէնջ բնակչաց տերութեանս արդիւնաւորին, որպիսիք են ապաոց րէն գործածուածն առ ի տրոյ և վաճառոյ արուեստ արուեսքոյ՝ նոյնպես և ՚ի միջև տերութեան մերոյ. և վասն առաւել շահատիրութեան ՚ինոյն Թոխատ՚ար ձ ց ձերոյք ծախիքն չինել նուա վաճառականական, յօրինել զդիւանսն և արդիւնաւոր փապրիքս, զուաձոլս, (գործարանս) մրգպահն այդպէս, որ ընդ աշխէն նոյնց ամենայն կերոյ դինի ՚ի խաղաղ չինել նոր բնակութեան ձերոյ մանր մանր չափիք. և այլ ոտրեր ՚ի մէջ երկրին ըստ սահման պահել և պօշխով (տակառաւ) վաճառել կարէք. Ֆրանկօղլի առաջ (ալի) չինեցուք իւրաքանչիւր ոք. սակայն ոչ տալոյք ՚ի մէջ երկրացս առաւտուց, այլ միայն վասն ինքեանց գործածելոյ, մինչ բանիս զամենայն ապրեստս քաղաքացանել քան յաժորութեան և կարգաւորութեան իւրաքանչիւր և վայելել ամենայնիւք նաքօք ենթ առնապրանքս ձերոյ հանգստութեան և պահպանութեան օրինաց արդիւնաւորել։

«Օգտ ամենայն առաւելութիւնս մէջ շնորհեմք հանդիսաւորին ամենայն հաստատակութեան և չետապային ՚ի յաւիտեան ժամանակս։ Այսպէս առաւել հաստատութեան առտպետական ձեռաք մերովք և Թագաւորական կնքովք ամրացուցանել հրամայեցաք։ Տուեալ եղև յարքայանիստ քաղաքն մերում Սանկտպետերպուրգ։ յամի ՚ի ծննդենէ Քրիստոսի 1779, յամսեանն նոյեմբերի 14. և ՚ի յաւակատութեան մերում տասնեւութ ամի։»

Ալը հանիկ հիւսիսային դաշնակցութեան Աձ. Հիւպատոս Պ. Պետերմանն արեւելագէտ Պօֆեսէօրը յանձնելով իմբռպրութեանս ինքնագիր յօդուած մի հայկական գրոց վերայ, խնդրած է տպագրութեամբ հաղորդել բանասիրաց իւր կարծիքը, յայտնելով միանգամայն որ շուտ ուբախ կը լինի, եթէ իւր գրուածոյն վրայ հիմնուելով դիտողութիւնները տեսանէ որ և իցէ բանասիրի հարմարին։

Առտի ուրախութեամբ սրտի կը մատուցանեմք ահա ընթերցողաց վերջալոյ յօդուածը, յուսալով որ հայասէր Պօֆեսէօրը կը հաճի ժամանակ

առ ժամանակ հաղորդել մեզ ապա-
դրելու զանազան գրուածս աեղեկա-
ֆիւնները ասիական տղայոց և մանա-
ւանդ հայկական հնութեանց վրայ,
զոր երկար ժամանակէն ի վեր ան-
ձանձրոյթ կը հետապնդէ։

Ալան Ֆոյխան Գրոց։

Ի Վենետիկ յամին 1865 ի լոյս ընծայեալ մատեանն, Պափո-Ռիւն Ֆոյ-
ըեն դը-Ռիւնոյ, պարունակէ բազում մանրախոյզ քննութիւնս ի վերայ մատենագրոյն Ֆոյոյ, և յերես 8—24 ունի գլուխ մի ի վերայ հայկական գըրոց։ Սակայն յոյժ գլխով քանի մի բանք գտանին, որք ոչ ամենեւին հաստատեալ ինձ թուին և ըստոյգ այլ կարծիս ունիմ։ Յանդգնիմ ասել ըստ իմում ակարութեան կարճ ի կարճոյ խօսիլ ի վերայ այսոցիկ, յառաջապէս աղաչելով ներել ինձ, եթէ բազում վրիպակս գտնիք ի բանս ուրուանի հայասիրի, այլ ոչ հայապիտի։

Ի սկզբան ասէ մատենագիրն, եր. 9, ունէին Ֆոյք զբեւեռագիրն, որպէս և այլ ազգք, հաստատեալ զայս ի բանից Խորենացւոյն գրելոյ ի վերայ արձանագրութեանց քանդակելոյ ի Շամիրամայ ի բազում տեղիս Ֆոյաստանի, մանաւանդ պէս ի բերդին Վանայ. և յօգէ ի վերջ եր. 9։ այսպէս. “Ֆոյաստանի մէջ Ֆոյոց հնամարդ գրուած արձանագրութիւնք պէտք էր որ խմանալի ըլլային նա և Ֆոյոց; ապա թէ ոչ ընդունայն պարծանք մը կըլլար Շամիրամայ գործը անանկ միջոց մը գործածելով, որով անկարելի կ’ըլլար երեն վախճանին հասնիլ”։ Ասոյ ինձ թուի թէ այս ոչ է հաստատութիւն կարծեացն նորա։ Վասնզի գտանին այսպիսի արձանագրութիւնք նա և յայլ բազում տեղիս, զորօրինակ ի փոքրն Ասիա և Ասորիս, այլովքն հանդերձ, և ոչ ոք ասիցէ՝ թէ այսոքիկ քանդակեալ են ի լեզուս ազգացն՝ ի մէջ որոց գտանին։ Իսկ եթէ պ. Ֆինքս անդրմացի կարծէ թէ այնոքիկ Ֆոյերէն են, այս ենթադրութիւն նորա է առանց հաստատութեան։ Ի մտանդիս Ֆոյոմմայեցիք և կայսերք Հռոմայեցոց կանգնեցին յոյլ և այլ տեղիս Ասիոյ արձանս լատինական և յոյն գրովք, որք անծանօթ էին և մնձեւս ցայժմ են ազգացն, որք բնակին յաշխարհն յայնոսիկ։

Յեր. 11. առ մատենագիրն. “Ընսիոյ հեթանոսին բնակիչք, որոց հետ մեր ազգն ալ Ջինոյ գրեթէ սկսան վարուիլ։ Նոյն գրոց կիրառութիւնը ընծեռան որբոյն Վրիպորի լուսաւորչի ժամանակ գիմացաւ, ու անկէ ալ մինչեւ որբոյն Աեսրոպայ օրը, այս տարբերութեամբ՝ որ եկեղեցական բառերու մէջ յաւնարէն ու ասորերէն կը գործածէին, քաղաքական իրաց կիրառութեան համար պահելով Ջինոյ գիրը և կամ պարսկական տառերը”։

Ընդ յոյժ տարակուսական է, քանզի ոչ ոք գիտէ թէ երբ գտեալ և ներածեալ են Ջինոյ այբուբենքն, և առանց երկբայանաց Պահլաւ ասիտառքըն հնագոյն են քան զՋինոյն, այսպէս ալ՝ Ջինոյքն Թերևս նորագոյն են քան զԱեսրոպականս։

Ընդ մատենագրին խօսի ի վերայ գիւտի գրոյն, որ ի որբոյն Աեսրոպայ, և յետ պատմելոյ զձանապարհորդութիւնն զաշխատութեանց և հոգսկեցոյց ջայտնութիւնն տուիցն նորա՝ բազդատէ զգանս գրոյն հնոց։ Ի բանից աշակերտացն որբոյն Աեսրոպայ այս միայն յայտ է՝ թէ ունէին Ֆոյք գիր յառաջ քան զտուրբն Աեսրոպայ, ոչ երեք յայտնապէս՝ թէ բազում վէմս նոր այբուբենաց Ֆոյոց տուրբն Աեսրոպ՝ կամ թէ լուսոյց միայն գիտ նէկլեանն, այսինքն գհինն։ Շնորհ լեալ կարծէ թէ հայկական տառքն ամե-

Նեբեան՝ ի Ս. Անդրեայ սկիզբն առին և ելին, այլ Կաղիկ և Արգան նման նմա միայն զլացուցեալ Կաղիկ եօթն, իսկ Արգան չորեքտասան տասից։ Ի գիտնականացն Հայոց ունիք Շնորհալեայն հետևին, ունիք Կաղիկեան և այլք Արգանեան, բայց ինքն մատենագիրն յայտնապես ոչ առ ոչ զայր ինչն կարծէ։ Այս հարկ ինձ Թուի զիս կարծիսն յայտնել։

Ի հին ժամանակս ոչ գիտեմք յորմէ ժամանակէ հետէ, Թերեւս յառաջ քան զԱղաքսանդրոս առաջին—Հայք ունէին առանձին տառս։ Այս վկայէ փիլոստրատոս և աշակերտքն պրեպոն Անդրապոլ, Խարենացին, Փարպեցին և Կիրիւն, որ և խնայուցանեն՝ թէ Նահապետեան տառքն ոչ տարբեր էին ի հնոցն, այլ մի և նոյնք էին։ Արդէ ոչ էին տառքս այսքիկ և որքան, ոչ աք ասէ։ բայց ի քննութեանց գիտուն Լեռոպացւոց գիտեմք՝ զի գրեթէ ամենայն ազգք ի Նաբելոնէ առին զայբուբենան, ուստի յայժ հաւանական է՝ թէ և այբուբենքն Նաբելացւոց կամ Փիւնիկեցւոց, որ ի Նաբելոնէ եղեալ են, քան և եղկոտ տառս ունէին, առանց երկբայութեան թէ հին տառից Հայոց ոչ աւելի էր։ Կայքիկ ոչ բաւական էին վասն լեզուի Հայոց, և յայմ պատճառէ սուբըն Անդրապ զպահպանութեան խմանալով խորհեր լուացուցանել կամ նորագել բաղբոլին զայբուբենան։ Ի թէ զտառսն ամենեսեան նորագեալ էր, նմանութիւն ոչ գոյր ի մէջ Անդրապական և Նաբելոնացւոց տառից, ասկայն դիւրին է բաղդատութիւն Անդրապական տառից ընդ տառից Նաբելոնացւոց և Փիւնիկեցւոց, որ ձգտիլս ցուցանել, զի քանի մի, այսինքն հնագոյնքն յայնցանէ, յայժ նման են պատճիկ յոյն Հայոց է թէ սուբըն Անդրապ ոչ բոլորովին նորագեաց, այլ միայն լացոյց զհին այբուբենան։ Կաղիկ ասէ՝ թէ Խանիել քան և եօթն գիր տառեղծ (ոչ տառեղծ այլ պատճեաց ընդ իւր զհին Հայկական տառսն) իսկ զեօթն գրոց պահատութիւնն Անդրապ առեալ է Այտուծոյ։

Կաղիկ այսպէս ենթադրէ, կարծելով թէ Անդրապ միայն զեօթն ձայնաւորան յօգեաց, և եթէ մի ձեռագիր հներեն այբուբեն քան և երկուտասն միայն ունէին և լոկ յօգաւորութեամբ ձայնաւորաց ոչ կարէին լրանալ պահպանութիւնք հայկական տառից։ Այսպէս ահա, ձշմարտութիւնն միայն գտանի ի գիրան Արգանայ որ ասէ՝ թէ Ս. Անդրապ առեալ զԽանիել եանբանեւերիս տառան՝ չորեքտասան այլ տառս յօգեաց, և յայնմ միայն Թուի սխալել, զի ասաց թէ յաւուրս Թագաւորին Լեւոնի ի Կիլիկիա գտաւ դրամ մի հին կտապաշտ Թագաւորացն Հայոց հայերէն տառիւք։ Վանիլ մինչեւ ցայժմ ոչ գտաւ և ոչ մի դրամ հայկական՝ հնագոյն քան զժամանակս Ռուբինեանց հայերէն տառիւք, և այս սխալանք առանց երկբայութեան ծնաւ ի նմանութենէ Պահլաւական և հայկական տառից։ Այս դրամ, զոր ոմն պէս Թուի, ինքն Արգան ոչ եռեաց Սառանեան էր։

Ասան Այսրի, Յունական և Պարսկական գիրցն, զոր Հայք ի գործ առնէին յառաջ քան զսուբըն Անդրապ, ասելի է՝ թէ ոչ էին յարմարագոյն քան զՀայոցն, այլ ի հարկէ ընկալան Հայք զայնոսիկ վասն առաջին եկեղեցական նային, որք էին կամ տարիք կամ յոյնք, և վասն գործոյն դիւանի Թագաւորացն ընդ Պարսիկս, և այսպէս մնաց. զհին առանձին այբուբենան։

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆ ԸՆԴՐԱՑՈՒՆ
(Ի հապ—ծ գրականութիւն վայ ընդդ—ածներից)։

Ազի գիտութիւն բաժին չէ ընկալ այնպիսի տարաբաղդ ու խորհ ճակատագիր, ինչպէս գրականութեան գիտութեան վայ հանդուցած է։ Կարելի է ասել որ գիտութիւնը ընդհանուր մարդկային կրթութեան գլուխն է և բոլոր վարժարաններում տեղ է բռնում, ինչպէս ամենահարկաւոր գիտութիւններից մինը։ Այս գիտութիւնը հին ժամանակներից հետէ սովորել և սովրում է ամեն մարդ, ով կանկացում է աւելի լինել մարդի և գրչի։ Ու եթէ կանխանայինք մի առ մի հաշուել գրականութեան բոլոր ուսուցիչներին, սկսելով Արիստոտելեանոսից, Լոմ պեդօկղէսից, Կօրաքսից, և այլն, ու րանք իրանց գրականական ուսումնական գործունէութիւններով յայտնի են պատմութեան մէջ, ապա կը պարզմանայինք գրականութեան հրահանգներու ահագին քանակութեանը վրայ, որոնք մեզ են աւանդուել առաջին դարերից ու սերունդներից։ Այս կազ մանէ ոչ մի գիտութիւն գրականութեան հետ չէ կարող մրցանել։

Այս արտաքին հարստութեան հետ պէտք էր ազատել՝ որ բոլորովին պարզ պրշուի այս գիտութեան բովանդակութիւնը, որի այնպէս յաճախ եղան դատ ներկայացնողները՝ խուզարկութիւններ ու հետազօտութիւններ անելուց յետոյ, չկարացան դուրս գալ հատակութեան առաջ իրանց բազմամեայ աշխատութիւնների և մտածմունքների արդիւնքներով, այնու ամենայնիւ այս տեղ մի այնպէս թանձր մառախուղ է պատել, որ ուրիշ ուսանողական բաժիններում չէ երեւում։ Մինչև այժմ ուսումնականները հատատած հայեացքով չեն նդել գրականութեան գիտութեան առարկան, չեն պարզաբանել նորա բովանդակութիւնը և չեն տուել սահման նորա շրջանակին։ Իսկ գիտութիւնների դասակարգութիւնը, որպիսով սովորաբար ուսանում է գրականութիւնը, այն խճճուն ունի, որը այս տեղ ակներև է։ Գրականութեան ուսանողը առաջին քայլափոխումի հանդիպում է իսկ և իսկ առարկայի ծանր հարցմունքին։ Իսկ միւս գիտութիւնները սկզբից ցոյց են տալիս թէ՝ ինչ վայ են խօսելու. իսկ այս գիտութիւնը դեռ սկսի իրա նկատել որպէս և աշխատել իրան համար սահմանափակել մի որ և իցէ անպատուղ խորշ գիտութեան դաշտումը։ Գրականութեան համար ուրեմն Թշուառ է մեր ժամանակը, երբ նորա եկած առաջին ճանապարհները երևցան անկանոն և քիչ պիտանի։ Մեր ծերերը սահման (définition) էին տալիս այսպէս թէ՝ գրականութիւնն է այն գիտութիւնը, որ ուսումնասիրում է շարադրել, այսինքն՝ ուղիղ և գեղեցիկ բացատրել իրանց մտքերը և կարողանալ ամեն ներթի վայ լաւ գրել։ Նրանք սեռներում էին որոնում շարադրութիւններով վարժուելու ժողովածոյ կանոններ և որոնով բուսական էին։ Այժմ անյայտ է կացել այն բաղդատութիւնը բուսականութեան ժամանակը և պատճառական աբօլատակատութիւնը չէ բուսականացնում մեզ։ Մեզ զբաղեցնում մտքերի գիտութիւնը, գիտութեան և արուեստութեան վայ չորս անպատուղ ճառերը և մինք ժամանակ հենուելով գիտութիւններով սկսեցինք ուսերել հին հռետորների թղթեայ ճառները, որոնք աբօլատակերին էին յեղուած և ահա չնայ եղբար բարի վայ առաջուայ աւելորդ դարերով զբաղուած չնութիւնից։ Նոր չնութեան

հարկաւորութիւնը երևեցաւ, բայց չինելը այնպէս հեշտ չէ, ինչպէս ասելը և նոր չինութիւնը առաջ է գալ նամ շատ դանդաղ։ Վրաբանութիւնը՝ իբրև գիտութիւն, ներկայանում է մի ընդարձակ և անհերկ գաշտի նման, որի մէջ տեսնում ենք շատ ուրեք տանկներ, որոնք իրանց ձևով տարբեր նկերի կամ միջնադարեան աբօլատիքի ժամանակները մեր միտն են բերում. բայց այս աւերակների տեղ որոնց հետ կարգով չեն բարձրանում նոր հատուածն և գեղեցիկ չինուածներ։ Թէև այս գիտութեան մէջ նորաձևութիւն մոդերնողները բաւականին են, սակայն շատ անգամ տեսնում ենք, որ սրանք էլ կեանքի են յարուցանում նոյն իսկ հին ոակրնները, որոնք մեզ զգուշացրին իրանց աբօլատիքական ձևով և որոց վրայ իրանք էլ ուրիշ ժամանակ ծիծաղելուց չեն կշտանում։ Սրանք ծաղկում են այս շուր ոակրնները ժամանակ եայ կապերտով և կարծում են, թէ սրանով բոլորովին գիտութիւնը վերաբառնեցին։ Իւ այս հետևն անգամ հարհիս երեսին գրքերի կերպով կամ տեսքով մեն են գալի այսպիսի զարգացած, այլ միայն գերեզմանից դուրս ընկած շատ հսկաներ։ Իւ ընդելով այնչափ անմիտնչ և անդադար ազազականերին թէ՝ ինչպէս անճոռնի է հինը և ինչ պէս հարկաւոր մի արմատական վերանորոգութիւն, այնու ամենայնիւ բան մեծի մասին մի և նոյն երգն է երգվում միայն նոր ձևով։

Շատերը տեսնելով գրականական գիտութեան աշխարհին մէջ ամէն ինչ աւերուած, թառամած և անցած ջոզ ուղղելու, մի կատարական կամ սկեպտիքական (sceptique) անհաւատութեամբ՝ նայում են այս գիտութեան նորոգութեանը ամէն կերպի ջանքին վրայ, մինչեւ անգամ հանդգնում կարծելն են սուանձնում ապացուցանելու նորա օրինաւոր և ինքնակեաց գոյացութեան անկարելիութիւնը առանձնակի և իսկական գիտութիւնների աշխարհում։ Այս մարդիկ կը կրանց երեւակայութեան մէջ գիտութեան յետ մնացած կամ ապրած ժամանակից պայմանաւոր ձևերը դնում են նորա ինքնակեաց գոյութեան տեղ և այս յետ մնացած ձևերով չեն կարողանում յարգել նորա գոյաւորը և գոյնական (essentiel) նշանակութիւնը։ Սանը այսօրէզ հանճարեղ յետոյ՝ գրականութեան նիւթի հարցը սառնում է մի առանձին նշանակութեի և այն բանի իսկական ահ մանը, ընչի վրայ խօսելու է գրական նիւթիւնը, պիտի լինի գրականութեան նորագիւտն առաջին քայլափոխը և կարող է սիրել նորա վրա մի այնպիսի բարերարութիւն ըլլա, որ մէջ նրան տեսնելու սովոր չէ մեր կրթուած հասարակութիւնը. մոռաբերելով հին տարիները, որոնք այս գիտութեան պատմութեանը համար ծանր և անպատշաճ էին։

Այս ընչի վրայ պիտի խօսե գրականութեան գիտութիւնը։ Այս հարցմունքին պատասխանելու համար պիտի նք գիտութեան տնտեսանը, որ պիտի լինի նորա բովանդակութիւնը ոչոց ուսոյ տկներուն և ամէնի համար հասկանալի նշանաւորոյ կամ տեսակի և ուսուցչական ըստ ժամանքի օգնութիւնով կը ցանկանայինք տեսնել նորա առարկան։ Սայց այսօրէզ գիտութեան անունը շատ քիչ ու անստոյգ է յատկացնում իւրա, եթէ մենք գրականութիւնը տեսնենք իրա կրած անունով, մի նշանաւոր տեսակէտի տեղ կը տանք մեզ երեւակայութեան մէջ, այն ժամանակը մենք նրան կը հարկադրենք նրանով պատասխանել, ինչ որ նոր առարկայի մէջ հարկաւոր թէ ներ

բարդական տարրէ : Կրականութեան անունը իր ընդարձակ նշանակութեամբ հարիւրաւոր է ունի միայն գրականական գիտութիւնների համար, որ շատ ընդարձակ է և պղտորարար : Մեր աչքի առաջին այս չքնաղը բաժանում է երկու զանազան և ինքնակայ դասակարգի :

Առաջին դասակարգումը խօսքը երեւում է ինչպէս մի առանձին նիւթական աշխարհ, որ հարիւրաւորութեան ուժով արտաբերվում է մարդկային ոգու խորքից և ունի իրա անդամակցմութիւնը ու զարգացման օրէնքները : Արդարև միջի խոհական ակղունքը անդադար ներգործում է այս աշխարհի վրայ, բայց այս աշխարհի նիւթական գործութիւնը իր մէջն է կլանում բոլոր մանուածոր վերածութեան ներգործութիւնները և բազմի պէս հետի լինելով ապաուժանման պնդութիւնից, թագաւորում է վերածական աշխարհի փոխհատուցութեան վրայ : Այս ինքնակայ աշխարհի հետախուզութիւնը նուիրած է լեզուագիտական կամ քերականական գիտութիւնների կոչուղը և խօսքի կամ բառի կազմութիւնը իրա հիմնաւոր օրէնքներում և ամենաընդհանուր ձեւակերպութիւններում միշտ միատեսակ է ու անփոփոխ : Այդց հրնչեցման կազմութեան ու ներդաշնակութեան մէջ, որոնց մէջ խօսքի ներքին զգացութիւնը մարմնանում է, կայ մի բաժանման ձգտողութիւն, — կայ մի բաց կողմ առանձնապէս վերածական ակղունքի ազդեցութեան ու ներգործութեան համար, — այստեղից բաժանուեցաւ մարդկային խօսքի մի ակ ձեւը շատ ճիւղերի վրայ, որոնք երեւում են ինչպէս ազգային լեզուներ : Այսպէս ապա երեւեցաւ ընդհանուր քերականութիւն, որ հետազոտում է առհասարակ մարդկային խօսքի կազմութիւնը. երեւեցան զանազան լեզուների մասնաւոր քերականութիւններ, վերջապէս երեւեցան ընդհանուր բազդատական քերականութիւններ, որոնք բազդատում և բացատրում են զանազան ազգային լեզուների կազմութիւնը : Եթէ լեզուն դնալով խօսքը լինի ըստ ինքեան ինչպէս մարդկային բնութեան յատկութիւն չէր ունենալ պատմութիւն : Այդց նիւթական գործութիւնը, որ խօսքին կից է, խօսքի իակ զարգացումը, որ նիւթաւորած է հետ գնացած փոխխօսող սերունդների հասուցած ազդեցութեան ներքոյ, և նորա լեզուների ու բարբառների վրայ ձիւզաւորիլը կարելի և պիտանի համարել առանձին ինչպէս ընդհանրապէս մարդկային խօսքի պատմական հետազոտութիւնը, այնպէս էլ մասնաւորապէս զանազան ազգային լեզուների պատմութիւնը : Այդ խօսքին վերաբերեալ գիտութիւնների առաջին դասակարգը : Ոչ այս տեղ խօսքը նկատվում է ինչպէս ինքնակայ և անկախ աշխարհ, սակայն մենք ստիպուր չենք անուանելու գիտութիւնների այս դասակարգը այն բառով, որը ուղղակի սրա բովանդակութիւնն է ցոյց տալիս :

Միւս դասակարգումը, որ յատուկ է գրականութեան անուանել, այլ է նիւթը և այլ հիմնաւոր հասկացողութիւնը : Այստեղ արդէն խօսքը երեւում է ոչ այնպիսի ինքնակայ տարր ինչպէս է բանասիրի աչքի առջին, այլ ինչում է արտաքին իրի կամ գործի առաքինին, որով օգտվում է մի սրիշ ինքնակայ ակղունք ինչպէս իրեն ծառայող բանով կամ իրով : Այն տարրը, որ իրան համար գրականութեան համագասութեան մէջ պահանջում է ուսումնական հետազոտութիւն և տալիս է նրան իր անը-

հոս բռնանդ ակութիւնը, այն ներքին մտածմունքներուն աշխարհն է, որոնք ծնանում են ժողովրդի կամ մարդու հոգու մէջ և խօսքի միջնորդութիւնով յեղափոխում են մի արտաքին իրական գոյացութեան կամ աշխարհի որ ունի իրա օրէնքները և գծագրութիւնը։ Այսպա տեսանելի սահմանները սահմաններ են գրականութեան, որ սկսում է ժողովրդական երեւակայութեան անդգալի թռիմտմունքով և վերջանում է հանճարատուր անձնաւոր գործութեան արհեստական ստեղծագործութեամբ կամ քերթուածով։ Այս աշխարհի ամբողջ տարածու թեան վրայ ձգուած է մարդկային մտածմունքի ազատ ստեղծականութեան գաղափարը, որի մէջ մեզ երեւում է կեանքի հոգեկան գործունէութեան ամենաշքեղ ծաղիկը։ Լեզուի նահանգը գրականութեան նահանգին հետ յարաբերելով՝ այն է, ինչ որ արտաքին եղելութեան (essence) նահանգը յարաբերելով ազատութիւնով որոշուած հոգեկան եղելութեան հետ։ Մարդը իր լեզուի ստեղծիչն է անուանվում, ապա ստեղծիչ է նա այս ոչ անգգայապես, որ բնական ազդեցութեան գործունէութիւնով արտադրում է իր մէջ լեզուի տարրեր, ականջ խառն վերացական նշանակների հետ։ Գրականութեան աշխարհի մէջ շատ աւելի ընդարձակութիւն կայ անձնական գործունէութեան համար, անխախտ օրէնքների չյաղթուելով գրականութեան ստեղծականութեան հիմնաւոր օրէնքները ճաշակի օրէնքներ չեն դնում աշխատող գործութիւնների վրայ, այլ թուլատրում են մի փոքր հակումն անխախտ օրէնքներից։ Աւելի քիչ կոպտակցութիւն ունենալով մարդու հետ ինչպես բարձր շրջանի օրէնքները, այն ժամանակը այս օրէնքները տրուում են մարդուն աւելի դժուարութեան թէ լեզուի օրէնքները։ Լեզուի աշխարհին մէջ իւրաքանչիւր ինքնաճանաչ անձը ներանում է մի առատ սխուած հարստութեան, գրականութեան աշխարհը նմանապես ամէնքի համար բաց է, բայց նրանում արհեստականութեամբ աշխատում և հերկում են միայն այն մարդիկը, որոնք ամբողջ գնդիկը գործ են պրծել. մինչեւ անգամ մի կրաւորական (passif) մասնակցութիւն նրանում քիչ կամ շատ նախապատրաստութիւն պայմանը ունի։

Ընդ ներկայացնում էին գրականութիւնը և այժմ շատերն էլ ներկայացնում են ինչպես բոլորովին ձևաւոր կամ տեսական գիտութիւն, որ նիւթաւոր բովանդակութիւն չունի։ Այս հայեացքը գրականութեան համար իսկապես մի խարխափում էր և նրան փաթաթեց այն գեր աբօլատիքով որի մէջ ամօթ է նրան դատ գալ ոանձին գիտութիւնների կարգը։ Այդ գրականութեան ստեղծականութեան աշխարհը, գրականութեան առարկայն դատարկ ձևերի և միայն վերացական դատակարգների աշխարհ չէ։ Այս հետաքրքրութեան համար առաջարկում է այնպիսի ներգործիչ ու նիւթաւոր իրեր, այնպիսի տեսածներ, որոց վրայ հիմնուում է և հետախուզում նրանց բնական գիտութիւնը, զոր օրինակ՝ անկաւանութիւնը, կենդանաբանութիւնը։ Կամ եթէ այսուհետ այս չէ կարող լինել ճիշտ և բոլորովին համապատասխան, ապա մենք ցոյց ենք տալիս համեմատելու համար իրաւունքի և բարոյական գործունէութեան աշխարհը որը այնպես ներգործիչ ու նիւթաւոր է ինչպես գրականութեան աշխարհը։ Միեւ համար կեանքը և նիւթականութիւնը ոչ միայն անկենդան կամ մեռեալ իրի (matière) մէջն է, այլ և մարդկային ձգտումների եռուն երեւոյթների մէջ։ Այս երեք մեզ համար

ներդործիչ է ծառի վրայ բուծնող տերևը, ապա աւելի ևս ներգործիչ պիտի թուի խոհական և ապատ հոգու պատկերը, որ մեզ գրականութիւնը ներկայացնում է իրա միջից իմ մենք նրան վեր առնենք մի մտածութիւն ու ապատ լսոգեում, և թէ՝ իրա օրինքների բոլոր ամբողջութիւնում։ Այս գիտութեան առարկայ նիւթական բանականութիւնը ակնառութիւն արտաքերվում է պատմութեան մէջ. և գրականութեան պատմութիւնը, որ գրականութեան բոլոր գաղափարներ մէջ մեզ զգալի և կարևոր մասն է, շատ պարզ խօսում է այս գիտութեան միջի բոլոր ձև ակերպների (formaliste) դէմ, որոնք նրան մի որ և իցէ կենդանի բանականութիւն տալուց վախում են։ Գրականութեան պատմութիւնը չէ խօսում միայն այն ձևերի վրայ, որոնցով գաղափարգուեց և երևեցաւ մարդու տեղծական միտքը. նա չէր հասկանալ իր նշանակութիւնը, եթէ իրան տար այս կամ այն ձև ինն նմանող տեղծուածների չար անուանակոչութիւն։ Նրան առարկայ են մարդկային հոգու խորքից բղխուած գաղափարները, նրանց զարգացումը և շարժումը դարէ դար ու ազգէ ազգ։ Այս ցոյց է տալիս այն տեղծուածների կարևը, որոնց մէջ մարմնանում է պատմական հոգու ազնիւ եղելութիւնը (essence), և այս պատճառով, ինչպես մի կենդանի մասն, անցնում է պատմութեան բոլոր լսոնութիւնով ու ընդարձակութիւնով. և նիւթաւոր նշանակութեան հետ յարաբերելով այն իրաւունքն ունի, ինչ որ ազգի կամ մարդկութեան ընդհանուր պատմութիւնը։

Վերջը գրականութեան պատմութեան մէջ մենք չենք կամենում թագչել այն չար ձևականութիւնից փախչելու համար, որից չդիտեն՝ թէ ինչպես փախչին գրականութեան տեսութեան մէջ։ Տեսութիւնը արհամարհելը ճար էր և կարող է ունենալ զօրութիւն, ինչպես վերջին ատիճանի հակադրութիւն (réaction) սուտ տեսութեան դէմ պատերելուն։ Այսպիսի հակադրութիւն օրինակ երևում էր եռանդուտ բանասիրութեան դէմ, երբ նորը պատմութիւնն վերջին ատիճանի հասկացողութիւն եղև սուտ դատականութեան կամ սոեֆդօկլասիթական ինքնակալ և կոյր տեսութիւնը։ Ինչպէս էլ որ լիս կատար լինի գրականութեան պատմութիւնը, այնուամենայնիւ բուսական չէ իր առարկայն լիովին բացատրելու համար. նա մեզ ծանօթացնում է գրականական տեղծականութեան պատմական զարգացման հետ, բայց մեզ նրա դատաստը չէ շինում, մեզ է տալիս նրան քննադատել որով կը լուսաբերէր այս բոլոր ընդարձակ աշխարհը, որից կը բացատրուէր նրա սկիզբը, նրա ձևը և նպատակները։ Մենք գիտենք հատուածներ, գիտենք մատենագրութեան մի արտաքին կողմը, ինչպէս գրականութեան առարկայ, երբ ծանօթ ենք նրա պատմութեան հետ։ Գրականութեան տեսութիւնը լուսնում է և պարզաբանում մատենագրութեան պատմական գիտութիւնը։ Այս տեսութիւնը պիտի ներկայացնէ այն գաղափարի ամբողջ ձևը, որը փոքր ժամանակ մատենագրութեան կերպ ունի և բաժան բաժան է լինում շատ անձնական երևոյթների վրայ, որոնք իրարու լրնկատութեան ծառայում են։ Ահա, ինչպէս տեսնում ենք, առարկայն ընդարձակ է և այնչափ ներդործիչ, որչափ ներգործիչ են նրա պատմական երևոյթները։

Յետոյ աւելի պարզ և մանրամասն կը բացատրենք այս՝ սուտ զրուցատրութեան աւելի ջատելու համար։

(Պիտի շարունակուի) Մ. ՄԿՐՏՉԵԱՆ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՇԱՒՈՒՆԻ ՈՒ ՀԱՂԱՒԱՀԱԿԻՐՔ ԳԱՏԱՆԻ

(Շարունակութիւն, տես թիւ 11 · 1867 ։)

ԻՐ

ԱՂՏՈՂԻ ԸՆՈՒՐՕՒԻ ՕԳՈՒՄՆ

Ընջի անգամուն որ չանցանք մը ըսիր, ինչպէս քաշուելայր ու սրտի վէրքին խիղճդ զարկաս ։ Ծօ որ ան հոգ եղար, վայ քեզի. ան աւելի սըխալմունքդ քեզի ուրիշ մըն ալ ընելու պատճառ եղաւ. վախճանակ դի թէ որ այսօր բարի գործ մը ընես՝ ներքեզ կը մղուիս ուրիշ մըն ալ ընելու. և ան գժուարութիւնն որ այսօր կը զգաս բարի գործ մը ընելու առեն, վաղը չես զգար թէ որ այսօր ընես ։ Այսպէս նաեւ կամքն ալ կրթուելէն կը լաւնայ. եթէ մէկը տեսնաս որ ազէկ է՝ կը վատահիս իրեն, յոյսդիլ որ միշտ անանկ ազէկ մնալդ պիտի մնայ ։ Ընաբնութիւնն ուրիշ բան չէ, եթէ ոչ վարժութիւն մը միշտ ազէկ ընելու, և ով որ ինքզինքը կը վարժեցնէ՝ ընաբնին ու բարեկիրթ է ։

Աըտեմն ես ալ որ կ'ուզեմ առաքինի ըլլալ, ինչ պէտք է ընեմ ։

Կհատասիկ ։

Ա. Օ գայթակղութիւններդ ատնէ ։ Անոնք մինը նեւթերէն սրտատած մըն է. հոգին կ'ըլլայ ու հոգ պիտի դառնայ, և դուն ինչպէս կրնաս հաւանիլ որ ինքը հոգեւոր սիրէ որ անմահ է և պատկեր Աստուծոյ. ուրեմն միայն դգայարանաց հաճոյքը համար ամենևին բան մը պէտք չէ որ ընես, հապա միշտ նայէ որ ըրածդ արդեօք պատուոյդ ու վախճանիդ հա մեմատ է թէ չէ ։ Օգտակար է երբեմն օրինաւոր ու անմեղ բաներէ ալ հրաժարիլ, որպէս զի առաքինու թեան հրամայածին, այսինքն է՝ վեհ պրկելու վարժուիլ, ինչ որ կատարեալ մէջ կրատիպատուելը ընելու ։

Ի. Ա՞ինչ գործ մը ուներիր, ատեն որ Ֆո–ը–Ի–ը մայր է ախիկ (1)։

Գ. Ըստ պատահման և ըստ հաճոյից մի գործեր, և ոչ իսկ առանց լաւ ուշ դնելու թէ արդեօք այս գործդ արդար ու ազնիւ է՝ թէչէ. ուստի խղճմտանքիդ հարցուր թէ ատ ըրածդ ինչ հետեւանք կրնայ ելլել թէ ինծի և թէ ուրիշներուն նկատմամբ. և թէ ինչպէս կ'ելնիսար քեզի թէ որ ուրիշ մը նոյն բանն ըներ. ատ ինչ կ'ըլլար թէ որ ամենքը նոյնպէս ընէին ։ Այսհետէ խմաստուն Թագաւորներէն մէկը կը լսուէր քսակով սակի պարզեւ նոյն խմաստուներն՝ որ ատ խրատը իրեն ըրաւ թէ. Ինա մը ասենէին մի՛ ըներ ատանց նախ անոր հետքանորը լաւ մը հարցնես։

Դ. Սահմանը քննէ դքեզ, և ոչ միայն պարզ ըրածդ. այլ նաեւ ինչ պատճառաւ ընելդ ալ ։ Երբեմն աղքատի մը ողորմութիւն ատելը, ազէկ է, բայց մտածելով որ տեսնողներ կան ու պիտի գովեն դքեզ ։

Ե. Ծէ որ վրադ հակամիտութիւն մը կը տեսնաս դեպ ի առ չարն, քանի տատրիտութիւններով անոր յաղթելու ։ Կը տեսնաս որ հպարտ ես, խոնարհութեան վարժեցուր դքեզ թէ որ ենթակայ ես շատ ատեն խօսելու, քանի որ ամենէն չնչին բաներու մէջ ալ կարգէ դուրս անհեղձութիւն մը բանեցընես. մէկու մը դէմ առերեսութիւն մը կըզգաս, քովը մնռեցիր, խօսէ ու բարեդործութիւն ըրէ ։ Այսպէս նոյն կերպով փախիր այն առիթներէն որ դքեզ աւելի դիւրաբեր կրնան խոտորեցընել քու աղէկութենէդ, ու մի ըսեր թէ՝ այս կամ այն հանգամանքներ

(1) Խոնարհաբար ի՛աղաչենք Հայ կղերին մեծ մասը թող բարեհաճի այս տողը լաւ խմաստասիրել։

Ծ. Օգնական։

թեան չեմ կրնար յաղթել, ան վրա ձուքեան պէտ չեմ կրնար կենալ, չեմ կրնար իմին խառնուածքիս յաղթել։ Ա՛ն բան կրնաս ընել, միայն թէ կամք ունենաս։

Ը. Ա՛ռ՝ ընդ որ կենակիս, և ասոյէ ինչ ո՛րպիսի ոչ էիս։ Ա՛ն ածիս խնամն է, թէ ինչպէս կուսակրօնութեան մէջ ա՛ւելի անոյշ ոգին ու եղանակը կը բանեցնենք որոյ հետ որ ստէպ կը խօսակինք, նոյնպէս նաև ուրիշ բաներ մէջ ալ այն մարդկանց կը հետեւինք՝ որոյ հետ որ ստէպ կը կենակցինք։ Աւրեմն դէշերէն վախիր, աղէկներուն՝ ի խնդիր եղիր ու անոնց հետ կենակցէ. այս կերպով կրնաս ինքզինքդ ուղղել ու բարի անուն ըսանել։ Կաւի կտոր մը գտայ որ անուշ կը հոտէր. արդեօք ուրիշ տեսակ կա՞ մըն էր ասիկա, չէ. այլ վարդին եայ մէջ կեցեր էր։

Թ. Ընկերներուն օրինակը կ'ըսախպէ դբեղ որ իրենց նմանիս. հակառակէն վախիր։ Խոհեմ դուռէ քու ըսածներդ, իսկ ուրիշներուններն բարեսրտու թեամբ։

Ժ. Խորհրդական դրեանք կարդա, և մանաւանդ ապէս երևելի մարդկանց վարքերն ու պատմութիւնները. մի և նոյն դիտուածներն անձիդ յարմարցուր՝ որով առաջուց վարձ կ'ըլլաս, ու իրենց ըսածներէն տալիք վճհանձն գործոյ վրայ զգամնալ, առաքինիները սիրել։ Նայց դբքերը կերակուրի պէս են, շատ ուտելը աղէկ չէ, հապա լաւ մարսել պէտք է։

ԺԱ. Ցիշէ որ միշտ Ա՛ստուած ըղքեզ կը տեսնայ, որուն քիչ առեղծն հաշիւ պիտի տաս ամեն գործոցդ ու ամեն մտածութեանցդ։

ԺԲ. Ա՛նոնք են կամքերնիս ուղղադատ պահելու համար պէտք եղած նախապատրաստութիւնները. բայց դըժբաղդաբար մեզ որ մեղանչես. ինչ պէտք է որ ընես։ Ա՛ատոյն դեղը պղջմն է և առաջադրել որ մէյ մ'ալ նոյն սխալանոց մէջ չիյնաս. պակասութեանդ հակառակ աղէկութիւնները գործէ և ըրածներուդ դէշ հետեւանքներուն դարմանն ընել։ Թէ որ ուրիշին ընչեցը ելնաս հատուցիր, ոչ միայն եղած վնասը հատուցանես՝ այլ նաև վատուկելու դուռ մը բաց իրեն։ Մէկուն վրայ դէշ խօսեցար, ջնջա չէ թէ միայն իր վրայ ըսա խօսեցա՝ այլ նաև ուրիշ ի և խոչ մարդոց վրայ ալ ըլլայ։ Ա՛ամէնդ մեղք արտատրեցիր, քու պատիւդ մէյ մը մըտածէ, և առաջադրէ առաքինութեանդ մէջ այնպէս զարգանալ՝ որչափ որ չար սխալովդ դքեզ նուաստացուցիր։ Ի՛ բանի քեզի որ այնպիսի կրօնքի մէջ ծնած ես, որ չէ թէ միայն անմեղը կ'օրհնէ՝ այլ և ապաշխարող մեղաւորին ալ թեւերը բացած կըսպասէ և կ'ընդունի զինքը, երբ կը տեսնայ որ իր յանցանքը խոստովանելով Թողութիւն կը խնդրէ։

ԻԳ.

Կապակցագրծել ղայը։ — Ա՛յսպէսով կը կատարելագործես մարմինդ, միտքդ ու կամքդ. այլ ասիկայ բաւական չէ, հապա պաշխարութեան ալ կատարելագործելու միջոցի պիտի ունենաս։ Աւրեմն ամենայն կերպով պիտի ջգուշանաս այն ամեն բաներէն որ ընկերքդ ցաւ կամ վնաս և կամ հիւանդութիւն մը կրնան պատճառել. լաւ ու օգտակար խորհուրդներ տուր անոնց որ կարօտ են, իսկ բարի օրինակ ամենուն։ Կատարակութեան տարածելուն նպատակ. պաշխարքը մի՛ սհասճեցըներ, այլ ընդհակառակն ուրախացուր, ոչ որ առաքինութեան մէջ կը դեղեի՛ զինքը քաջալերէ. պակասութեան մը մէջ սահողը սիրտաբար ուղղէ, և քու դժկամակութիւնդ ցոյց ուրիշներուն դէմ։ Ա՛ջ

ամպհեծությունը մխիթարէ բարի գործքերով՝ եթէ կրնաս, ապա թէ ոչ գոնէ խօսքով. այսպէս ընելով ամենքն ալ կըսեն թէ՝ Ա՛ստուած ո՛ չաղչաղիքի մարդ է։

(Պիպի ըղբ-նախօսի)։

ԺԱՄԸՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Տան և ընդարձակ դարձաւ նոր Աբեան։

Վերնագիրս ընթերցողք հարկաւ պիտի զարմանան այս անուան վրայ առաջին անգամ. այլ երբ Տեառն մեր ըսի այն խօսքը որ կ՚ըսէ "Ես բազում առաւ մարգարէք յարկեցին և ղազարու մըս տեսաւցին" Ամառ. Գ. ԻԳ. աչքերնուն առաջը բերուեն, և մանաւանդ պատմութեանց ալ ակնարկ մի ընեն, պիտի մտաբերեն թէ նոր մըղրկուած մի ալ եղած է, կամ յայտնուած։ Նայց աւելի զարմանալին սա է, երբ լսաւորեալ Եւրոպային մէջ ամբարիշտ Ընձան մի կ՚ելլէ Բրիտոսի ձշմարիտ Ա՛ստուածութիւնը հերքելու, և ամբարշտութեան ծայրը հասնելով իւր չարամտութեանն ալ կը տայ. պէտ, և ամբարիշտ գրաւածքն ամբարիշտ զմայլողներ ալ կ՚ունենայ. ըսաւորեալ Եւրոպայի մէջ կ՚ըսենք Ձշմարտութեան սեղ սուտ Աստուած մի կը ներկայանայ. իւր հրաշքները փոխանակ իւր ծնած քաղաքին մէջ յուսընելու՝ օտար քաղաքներ կը վազէ. բայց սա ալ կ՚ըսենք թէ հարկաւ խելքը լաւ միտք դրած է աստուածանին այն խօսքին որ կ՚ըսէ "Մարգարէ չի գտնուի իւրաքանչիւր ոչ ունի"։ Յովհ. Վ. Դ. ուստի կ՚աճապարէ չի տեսը Քաղաքն այն ատեն սկիզբները Դաւիթ Աստուած անունով և իւր Տէրմայրն ալ Հեռն ունի Մարիամ անուն. ինքըզինքը կը քարոզէր յայտնելիք Աստուած և իւր վարդապետութիւնքը երկու տաքրիկ Դաղղիերէն տպագրած տետրակներու մէջ կ՚ամփոփէ։ Դրագածին մէջ իւր վարդապետութիւնը թէ աշխարհային և թէ եկեղեցական միաւորական իշխանութենէն հակառակ է. հարկաւ Ընդհանուր ժողովոյ ամենայն դէմ հակակրութիւն մի ունենալու է. և իւր պատասխանները վերջինը վայել կը կնքէ ըսելով. Այլ այն մարդուն որ կ՚ընդդիմանայ իմ հրատարակած պատասխանութեանս։ Ուր կը հրամայէ ա մէն ոգի իւր լեզուովը թարգմանել իր պատասխանները իրը Աստուծմէ ընդունած։ Մարը Քաղաքս եկած էր որպէս թէ իւր Աստուածային պաշտօնը կատարելու այն է աբեղերական հատաքակատութեան կեդրոնը հաստատելով Ներսիսեմի մէջ, հանգարձման օրը ճշմարիտ Աստիային հանգարձած լեռնէն երթալ ուխտել իւր Ընդհանուր ժողովը։

Ներեցխոտաբար Դաղղիացւոց Վեսեմ. Ներեցալ գնացողի աչալուսութիւնը յաղթեց նոր Աստիային հրապիրը. և յաւուրն պահնորդներով Յոպպէի նաւահանգիստը իրկեցալ դէպի չոփենաւը երթալու սահեց, ուր մնալու ժամանակ սա խօսքերը լսած է. "Աերևի թէ դեռ իմ ժողովրդեանս պատելու ժամանակը չէ հասած։"

—Ընդհանուր Ընդհանուր Ընդհանուր

տարեվերջ ազատուած են ինչպէս և Ս. Աթոռոյս կողմանէ իրենց պատգամուելիք։ Այս լոյն չենք կրնար հաշխատարել, և միաբանութիւնս և թէ ուրախութիւն մի ունին, այն է իւր սիրելեացը ազատութեան յոյսը, և անձկանօք կ'ըսպասեն նոցա վերադարձին։ Ես այս ըսելը եկած օրուան գիշերը, Ընդհանուր Հիւպատոսարան ձրագալառութիւն ըրաւ։ Տակաւին եղիք որ այս ալ անցեալներուն պէս անցաղարձութիւն չառնեինաք։

—Տիգրանակերտին ընդունած նամակներնիս գովութեամբ կը գրեն տեղւոյն Սրբազան Հայրապետին աշխատութիւնը և ուսման յառաջադիմութեան ունեցած փափաքին վրայ։ Քաղաքին մէջ եղած դպրոցները լաւ օրինի բարեկարգելէն յետոյ, գիւղերու մէջ ևս օրինաւոր դպրոցներ հաստատեր և վարժապետներ կարգած է։ Ես մանաւանդ չնորհակալ կ'ըլլան Հայրն Սրբազան Հօրէն, որ անցեալ տարի բարեհաճեցաւ Սուրբ Աթոռոյս կալւածոց արդիւնքները ժողվելու և աչքէ անցնելու համար Գեր. Տ. Յակոբ Ս. արքեպիսկոպոսը խրկել այն կողմերը։

Յիշեալ Սրբազան եպիսկոպոսը ինչպէս կը գրեն, Տիգրանակերտու բոլոր հնչակեան գիւղերը այցելութիւն ընելով և ամէն տեղ յատուկ ծանուցմամբ սէր ունենալ կը քարոզէ ազգի եկեղեցիի և գպրոցոց վրայ։ Ես լսած խնդրանաց բարեպաշտ ժողովրդոց և թոյլատուութեան բարեհնամ Հայրապետի շատ գիւղեր գպրոց առնելնուն տուած է. և Սրբոց Անակարեցւոց վանուց մէջ ալ Կոպէք գիւղի ժողովրդոց խնդրանաց և խնդրանաց համեմատ Տէր Պօղոսեան սիրոյս Յովհաննէսը քահանայ ձեռնադրած է ձրիապէս։

Բայց Տիգրանակերտու հնչակեանները եղած Բիւրեղութեան վրայ տակաւին կը գանգատին. նոցա ըսած հարիւնաւոր հարուածները չի պատմուիր կ'ըսեն և յայտնելին միայն բարեհնամ տէրութեան վրայ դրած են, մանաւանդ նոր Կառավարութեան արեւկարգութեան, որ սկսած է կարելի եղածին չափ ժողովրդեան հնչակութեան պատճառները ստամոտախիլ ընել։

—Ինչպէս ծանուցած ենք Աղտուն Վեր. Յովհաննէս սրբազան ալ եպիսկոպոսի անօրինական տեղւոյ յափսա և երկրպագութեան գալը. յիշեալ Սրբազանը ամսոյս վերջերը ուզեւորեցաւ դէպի Կ. Պոլիս։ Ես Վերամանիկեցի (Մարաշ) Գեր. Տ. Մկրտիչ սրբազան արքեպիսկոպոսն ալ հասաւ ի Ս. Աթոռս, և քանի ատեանս պատուեց Զմեն. Սրբազան Հայրը վարդապետ և Հաւատամքի խրկեալ ընդ յառաջ, և սիրով ընկալաւ։

—Յոպոկեն լուր կուտան թէ ամսոյս վերջերը հինգ հատ անպլիացի պատերազմական նաւեր հասած են յիշեալ նաւահանգիստը ընդ հրամանատարութեամբ Մէջերլիական ծովակալ նաւապետին ծովակալ Սըր Գըլաէնն Բաշդի։ Ես հետ գնեմ թէ նաւատորմիղ և թէ նաւապետ ատենաւոր կուգան յայցելութիւն Ս. Քաղաքիս։ Սոցա երթալէն յետոյ հինգ հատ ևս պիտի գայ կ'ըսուի։

—Ի վաղուց անտի Ս. Քաղաքիս մէջ գլխաւոր աղգայ յատուկ բժիշկ գնդապետ և հիւանդանոց կար և աղգիս համար այդ միաբանութիւնը պահպանեալ էր։ Սրբազան Պատրիարք Հօր նոր ձեռնարկութեանց մին ալ դեղատան հաստատել և բժիշկ ունենալը ժամանակին ծանուցած ենք։ Ս. Աթոռս այս արդի բժշկի պահպանագրութիւնը կը յայտնէ մեզ ուրախութեամբ հինգ հազարի մօտ հիւանդ նայուելը գնահատեն սպ եղէ, և խիստ շատերնուն ալ ձրի դեղ տրուելը։

Ներկայ նպաստակը ոչ բժշկին գործունեութիւնը և ոչ հիւանդոց բազմութիւնը յայտնել է, այլ միայն ցարդ Ս. Բաղաքիս մէջ որ իւր անուանքը ու յատկութեամբը և անօրինական տեղեաց եղականութեամբը բոլոր աշխարհիս մէջ առաջինն է, միչ ցարդ կ'ընթեր հաստատութեան հատոր հիւանդանոց մի չունենալն է որ կը յիշեմք։ Թէ և անուանալի է Ուսուցչաց և Պաղնիացւոց հիւանդանոցներուն անխափ հիւանդ ընդունելին, բայց որովհետև չափաւորեալ թիւ մի որոշած է իրեն կանոն, անկէց աւելի չընդունուիր։ ուստի շատ ժամանակ եղած է, որ ապրուստ հիւանդք անկոչ նամ մնացած են։

Նպատակ կառավարութեան հոգը՝ որ միշտ աղքատաց հանգստութիւն և անդորրութիւն ունենալնին է, անցեալ տարի Պերութ գումարած քաղաքական ընդհանուր ժողովին մէջ, զորը ժամանակին յիշած եմք, Ս. Բաղաքիս մէջ կառավարութեան կողմանէ հաստատուած հիւանդանոցի մի չինութիւը առաջարկուած և տեղեկագիրը Կոմսակոսի կառավարչին խրկած էր։ Ընդոյս մէջ հրամանն ընդունեց կառավարութեան դրամովը հաստատ կաց հիւանդանոց մի չինել յատկութիւն և ի միխիթարութիւն ապրուստ և անտէր հիւանդաց։

— Ընդոյս 10ին Նէդոկիայէն եկաւ Մկրտիչեան Կարապետ անուն տղան ժառանգաւորաց ուսումնարանի աշակերտաց, և ըստ կանոնի բժշկին քննութեամբ ի շարս աշակերտաց ընդունուեցաւ։

Ընդունի վկայագրի օրինակը։

Ընտիրապատիւ Սրբազան Հայր.

Նէդոկիայի Կարապետ Մկրտիչեան տղան ըստ բժշկական օրինաց քննելով որ կաղմուածքով և ներքին դիպուածքով առողջ գտնուեցաւ կը վկայեմ։

Նահատ Սահակ Վրիժապետեան։

1863 Մարտ 25 Նէդոկիայ։ բժիշկ Ս. Ամուրեան Նէդոկիայի։

— Սուրբ Ընծայարան տպարանէն ի լոյս ընծայուած գրքերը առ այժմ հետևեալ տեղերը կը վաճառուին ինչպէս կայ հաշուով անփոփոխ։

Կերիա (Հալէպ) Ընժ. Տ. Խաչատուր Վահանեանին գրասենեակը։

Կամախոս առաքել Սարգիս Նիկողոսին։

Վահրիկ Օհանեանի Կաղարով մեծապատիւ Ղազար Աիմէօնի վաճառատունը։

Օհանիա Անճ. Տէտէեան եղբարց գրատունը։

Կիւրիւն Ընժ. Տէր Վասպուր քահանայի ձեռամբ։

Խարբերդ Անճ. Ղուսուճատուր աղա Ֆէրմանեանի վաճառատունը։

Կ. Պոլիս. Անճ. Սարգսեանց և այլ գրավաճառաց քով։

Տիգրանակերտ Նախշեան Անճ. Յովհաննէս աղայի վաճառատունը։

Հանդիպելու պատահարդ գրութիւ փոքրոգներուը կրնան վերոյգրեալ անձանց միջոցաւ՝ և կամ ուղղակի Սուրբ Էջմիածնի գրելով իրենց փափաքը լեցնելու։

ՄԱՏԻՈՅ ՅԱՆՁՆՈՒԱԾ

Սաղմոս խոշորագիր 18 բանիւ։

Տօնացոյց միջակ։

Պտղոք առաքելոց։

տեան Յովհաննէս Պէյ ։
տեան Յ. Նէթսէս Էֆէնտի ։
տեան Պ. Մարգոսեանէ ։
տեան Պ. Նուռնէ օղլուզը ։
տեան Պ. Սիմոն Պէյ ։
Տէր Յովհաննէսեան Վաղարշապատ ։
Տէր Վրէժհանէսեան մահտեսի Գրիգոր աղա ։
Տըմնաքեան Յարութիւն աղա Կեռասոյի ։
Տօնեցեան Գասպարասի Յակոբ աղա ։
Րէխլեան Միքայէլ Պէյ. (3 օրի.)։
Րէսիմէի պաշի մահտեսի Միքայէլ աղա ։
Փանոսեան Գէորգ աղա ։
Փոխարէան Գէորգ Ամիրայ. (2 օրի.)։
Փէշտըմալճեան մահտեսի Մկրտչէլ աղա ։
Փէշտըմալճեան մահտեսի Սահակ աղա ։
Քամպուրեան մահտեսի Անտօն աղա ոսկերիչ ։
Քարակէօզեան Մկրտչէլ աղա պոմպաքէշ ։
Քայսախեան Աբաքէլ աղա ։
Քէմահճեան Ոսկի Էֆէնտի (2 օրի.)։
Քէրեստէճեան Էնոք աղա ։
Քէշիշեան Յովհաննէս աղա ։
Քէօրպէճեան Մարտիրոս աղա Սաղմիկեի ։
Քընաճեան Յարութիւն աղա ։
Օհանեան Յակոբ և Բարսէղ ազգ ։
Օհան աղա ։
Ֆէնէռճեան Յովակիմ աղա ։
Ֆէրուհ Բարսեղակ Պէյ ։
Ֆրէնկեան Յակոբ Էֆէնտի ։

ՀԱՑ ՓԱՑ

Գաբրիէեան Սահակ աղա Ակնցի ։

ՀԻՆ ՆԱԽԻՋԵԻԱՆ

Արժ. Մեսրոպ վարդապետ Բմբուռնոյ ։

ՂԱՐԱԲԱՂ

Արժ. Աբիսաղէս վարդապետ Սկեւրացեան ։

ՄԱՂԱՂԱՒ

Սերովբեեան Յովակիմ աղա ։
Պիծակեան մահտեսի Յովհաննէս աղա ։

ՄԱՐԱՀ

Սուրբ Մարգիս եկեղեցւոյ վարժապան ։ Նուէր Մէտ. Յակոբեան Ազգէ որ ԱՂՔԷՔԱՆԴԻԱՑ
Ճանոզեան մահտեսի Մարգիս աղա ։

ՄԱՐՋՈՒԱՆ

Գէր. Գէորգ Աբքեպիսկոպոս ։

ՅՈՊՊԻ

Արժ. Ալեքսան վարդապետ տեսուչ ։
Պատրիկեան Յովսէփ աղա ։
Ս. Մուրատեան Սիմէօն աղա ։

ՆԻԿՈՄԻԹԻԱ

Թանգուրան վերջ անուանեան Նիկոմիդիոյ ։
Տէր Կարապետեան Միքայէլ աղա ։
Տէր Մինասեան Եղիա աղա ։

ՈՒՆԻԱ (ՋԻՑՈՒՆ)

Սուրբ Յովհաննէս եկեղեցւոյ վարժապան ։ Նուէր Մէտ. Յակոբեան ազգէ որ ԱՂՔԷՔԱՆԴԻԱՑ ։
Սուրբ Յակոբ եկեղեցւոյ վարժապան ։ Նուէր Մէտ. մահտեսի Նազարբէկ ազգէ Ս. Գալուստեան ։
Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ վարժապան ։ Նուէր Մէտ. մահտեսի Նազարբէկ ազգէ Ս. Գալուստեան ։
Սուրբ Աստուածածնին եկեղեցւոյ վարժապանն ։
Սուրբ Սարգիս եկեղեցւոյ վարժապանն ։

ՊԱՂՏԱՏ

Խոխենոխլեան մահտեսի Խաչիկ աղայ ։
Խոխենոխլեան մահտեսի Խոխենոխը աղա ։

ՊԵՐՈՒԹ

Արժ. Գէորգ վարդապետ տեսուչ ։

ՍԵԲԱՍՏԻԱ

Գէր. Կարապետ Աբքեպիսկոպոս ։
Արժ. Պետրոս վարդապետ ։
Ահարան (մահտեսի) աղա ։
Աշպահեան Բաբէլ աղա ։
Տ. Թէոդոսեանց մահտեսի Մարտիրոս աղա

ՍԵՒԵՐԵԿ

Արժ. Եփրեմ վարդապետ Եզեռնայի ։
Եաղուպեան Սարգիս աղա ։
Իշխենեան Պետրոս աղա Մատենայի ։
Ենի գօնչեան Մարգար աղա Ակնցի ։
Սանասրդ Եմինի Կիրակոս աղա ։

ՎԱՆ

Արժ. Յովհաննէս վարդապետ Ամատունեանց ։
Առաքելեանց մահտեսի Մարտիրոսեան Մարգար աղա ։
Խաչատուրեանց մահտեսի Միքայէլ աղա ։
Նահապետեան մահտեսի Հաճիաբեամ աղա ։
Պօշեօհանց Գէորգ աղա ։

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Գէր. Յակոբ Սրբազան Աբքեպիսկոպոս ։
Տէր Մարտիրոս Քէշիշեանց ։
Աձէմեան Նահապետ մահտեսի Յօհաննէս աղա ։
Գուշուժեան մահտեսի Եղիա աղա ։
Եփկէն կարապետ աղա ։
Չէլեպ սապոնեան Գրիգոր աղա ։
Ճանոպեան Աբաքէլ աղա ։
Մինասեան Յոհաննէս աղա ։
Մխիթարվէլլի Միքայէլ աղա ։
Նահապետեան Աբեղա աղա ։
Շիրինկիլ Վաղարշեան Գէորգ աղա ։
Չաղըմեան Գէորգ աղա ։
Պաղտայ Օհան աղա երբեմն միաբան Ս. Յակոբեայ ։
Ս. Երուսաղէմի մխիթարվէլլի Յակոբ աղա ։
Տէր Յակոբեան Վարդան աղա ։
Տէր Կարապետեան Սարգիս աղա ։
Փոխարէանց Յակոբ աղա ։

ՏՐԱՊԻԶՈՆ

Գէր. Մեսրոպ Աբքեպիսկոպոս (2 օրի.)։
Արժ. Գրիգորիս վարդապետ ։
Բարեհամբաւ Լ. դպրոցն ։
» Մեսրոպեան դպրոցն Կիւմիւշխանէի ։
» Դպրոցն Կիպռոսի ։
Գասպարեան Յակոբ աղա ։
Գրիգորեան Նիկողոս աղա ։
Իշխարշեան Վարդան աղա ։
Կիւլպենկեան Կարապետ աղա ։
Կիւրճեան Գօզոս աղա ։
Մահսեհեան Աբիսաղէս աղա ։
Մեզաւրեան Սարգիս աղա ։
Մինասեան Յօհաննէս աղա ։
Յակոբեան մահտեսի Նահապետ աղա ։
Ս. Սեզաւրեան Խաչիկ աղա ։

ՓԱՐԻԶ

Թիւրքասեան Պետրոս աղա ։
Յակոբեան Մարգար աղա ։

ՔԻԼԻՍ

Յակոբ աղա Ակնցի. (2 օրինակ)։
Պողոսեան Կարապետ աղա. (2 օրինակ)։
Պատմաճեան Գէորգ աղա ։

ՔԻՇՆԵՒ

Արժ. Գրիգոր վարդապետ տէր Սահակեանեան ։

ՑԱՆԿ

ԱՊՐԻԼ

Դատախարակութիւն 73
Աբեղաները Հայ գաղթականութեանց Խրիմու . . 80
Վանն Հայկական գրոց 85
Դրականութեան գիտութեան առարկայն (շարունակելի) 87
ԲԱՐՈՅԱԿԱՆ . — Աբաքեմի և քաղաքակիրթ պատահնի . (շարունակելի) 92
ԽԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ . — Տան և իննեբորդ դարուս նոր Մեսիան . — Հայկշնատանէն երկած հեռագիրը . — Վեր. Յովհաննէս և Մկրտիչ Եպիսկոպոսք . — Յոպասլէն լուր . — Ս. Բաղաքիս մէջ հասարակաց հիւանդանոցի մը հաստատութիւնը . — Նորեկ աշակերտասցուցմը . — Օտանուցմունք : . . . . . 94—66

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

Ա. Սիոնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ քաղկացեալ ուիմածալ թղթով .

Բ. Տարեկան գինն է երկու արծաթի մէհմուկի հանդերձ Հանդարտին ծախքովը , կանխիկ վճարելի :

Գ. Ջատ առարակ առնել ուզողը , պէտք է ամէն մէկ առարին չորս դահեկան վճարէ :